

ՀՀ ԳՆ ՄԱՆԿԱՄԹԵՐՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

ՏԵՂԵԿԱԳԻՐ

ԲՈՒՍԱՍԱՆԻՏԱՐԻԱՆ
ԱՇԽԱՐՀՈՒՄ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ



Առողջ բույս-անվտանգ սնունդ



ԵՐԵՎԱՆ 2017

Տեղեկագիրը կազմել են՝



ՀՀ ԳՆ սննդամթերքի անվտանգության պետական ծառայության աշխատակազմի ռիսկերի կառավարման վարչության գլխավոր մասնագետ, տնտեսագիտական գիտությունների թեկնածու:

Անահիտ Զիրբինյան

ՀՀ ԳՆ սննդամթերքի անվտանգության պետական ծառայության աշխատակազմի բուսասանիտարիայի ոլորտի գլխավոր փորձագետ:

Մերուժան Թարգյան

Խմբագիր **Վարդուհի (Անուշ) Հարությունյան**

**ՀՀ ԳՆ ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ**

ՏԵՂԵԿԱԳԻՐ

**ԲՈՒՍԱՍԱՆԻՏԱՐԻԱՆ
ԱՇԽԱՐՀՈՒՄ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ**

Ե Ր Ե Վ Ա Ն



ԱՌՈՂՋ ԲՈՒՅՍ-ԱՆՎՏԱՆԳ ՄՆՈՒՆԴ

Տեղեկագիրը նախատեսված է բուսասանիտարիայի ոլորտի գործունեությունը համակարգողների և հարակից ճյուղերի մասնագետների համար և ներառում է բուսասանիտարիայի ոլորտը կարգավորող Հայաստանի Հանրապետության և միջազգային օրենքներ իրավական ակտեր ու ոլորտին առնչվող փաստաթղթեր, ինչպես նաև պարունակում է տեղեկատվություն բույսերի և բուսական արտադրանքների արտադրություն, իրացում, փոխանակում, ներմուծում, վերամշակում, պահեստավորում, արտահանում ապահովող ֆիզիկական և իրավաբանական անձանց համար:

Այն արդիական է, առաջինն էլեկտրոնային տարբերակով, բովանդակալի և տալիս է առանցքային մասնագիտական հարցերի պատասխաններ:

Տեղեկագրում ներառված նյութերի կիրառումը կնպաստի մասնագիտական գիտելիքների ընդլայնմանը և գյուղատնտեսության զարգացմանը, ինչպես նաև ոլորտի բարեփոխումների, առևտրային կայուն հարաբերությունների կարգավորմանը և հաստատմանը:

Հարգելի գործընկեր, մենք շնորհակալ կլինենք ձեր կարծիքների, լրացումների, դիտողությունների համար (miled777@yahoo.com, mm.tarzyan@gmail.com)

Տեղեկագրի էլեկտրոնային տարբերակը գտնելված է snund.am կայքի «Բուսասանիտարիա» բաժնում (2480 էջ):

ԲՈՒՅՍԵՐԻ ԿԱՐԱՆՏԻՆԻ, ԲՈՒՍԱՍԱՆԻՏԱՐԻԱՅԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

«Կարանտին» տերմինը ծագել է իտալերեն *quarante giorni* (կարճ *quarantine*) բառերից և նշանակում է 40 օր տևողությամբ ժամանակահատված: Դա այն ժամանակահատվածն է, որի ընթացքում արևելյան երկրներից Իտալիայի ծովափնյա քաղաքներ մուտք գործող նավերը կայանում էին հեռավոր նավահանգստում: Այս օրենքը սահմանվել էր խուսափելու համար «սև մահ»-ի՝ ժանտախտի, երկիր ներթափանցելու վտանգից:

Առաջին անգամ «կարանտին» տերմինը, ինչպես նաև նավերի երկարատև մեկուսացման բուն սկզբունքն օրենսդրորեն ձևակերպվել է ավելի քան 600 տարի առաջ, Իտալիայում 1374թ: Այն արագորեն յուրացվել է բոլոր երկրների կողմից: Դարակեսին կարանտինը կրում էր ժանտախտի՝ երկիր ներթափանցելու կասկածի դեպքում, արգելման, իսկ վարակիչ հիվանդությունների համաճարակի առաջացման դեպքում՝ քաղաքների և շրջանների լրիվ մեկուսացման բնույթ: Այդ ժամանակ դեռ պատկերացում չկար կանխարգելիչ պատվաստումների կամ ինֆեկցիոն հիվանդությունների դեմ պայքարի այլ միջոցների մասին, և կարանտինը այդ հիվանդությունների տարածումը սահմանափակող միակ միջոցն էր:

Մի շարք երկրներում գյուղատնտեսության և անտառային տնտեսության մեջ «կարանտին» տերմինը սկսեց կիրառվել այն միջոցառումների նկատմամբ, որոնք ուղղված էին անասնաբուծությունը, բուսաբուծությունը և անտառագիտությունը՝ օտարերկրյա վտանգավոր ֆլորայի և ֆաունայի ներմուծումից և տարածումից պաշտպանությանը: 1851թ փարիզյան համաժողովում ընդունվեցին միջազգային կարանտինային փոխհարաբերությունների հիմունքները, և արդյունքում՝ բույսերի կարանտինի համաձայնագիրը:

Կենսաբանության և էկոլոգիայի բնագավառում բույսերի վնասակար օրգանիզմների մասին գիտելիքների ժամանակակից մակարդակը հնարավորություն է տվել կազմակերպել կարանտինը գիտական հիմքի վրա՝ այն դարձնելով ավելի կիրառելի, նպատակային և

պակաս ծանրաբեռնված: Այժմ աշխարհի բազմաթիվ երկրներ մասնակցում են բույսերի կարանտինի միջազգային համաձայնագրերի մշակման աշխատանքներին, որոնց օգնությամբ ապահովվում է սահմանների սանիտարական հսկողությունը, տրվում է հրատապ տեղեկատվություն ինչ-որ տեղ ծագած ինֆեկցիայի օջախների մասին:

Բուսասանիտարիա տերմինը, որպես «բույսերի պաշտպանություն և կարանտին» հասկացության հոմանիշ, սկսել է տարածվել նախկին ԽՍՀՄ-ում 1970-ական թվականների վերջին, իսկ 1990-ականներին այն հայտնվում է ԱՊՅ երկրների նորմատիվ-իրավական փաստաթղթերում, որը պայմանավորված էր միջազգային կազմակերպություններին (ԱՅԿ-ԲՏՕ, ՊԳԿ-ՓԱՕ, ԲԿԲՊՄՅ-ՄԿԿՅՔ, ԲԿԲՊԵԿ-ԵՕԿՅՔ) նշված պետությունների անդամակցության նախապատրաստմամբ:

Բույսերի կարանտինի զարգացումը աշխարհում

Ֆրանսիայում 1660 թվականին կապված արմատային ժանգ հիվանդության բռնկման հետ, առաջին անգամ ընդունվել է «Կարանտինի» վերաբերյալ օրենքը: Առաջին կարանտինային միջոցառումները ևս անցկացվել են Ֆրանսիայում: Դրանք վերաբերվում էին խաղողի տնկարկների պահպանությանը, որոնք տուժել էին 1858-1862թթ ամերիկայից խաղողի տնկիների հետ ներմուծված ֆիլոքսերայից: Խաղողի որթի այդ վտանգավոր վնասատուի արագ տարածումն ու խաղողի այգիների զանգվածային ոչնչացումը երկրում մեծ տագնապ էին առաջացրել: Ֆրանսիայի գյուղատնտեսության և առևտրի նախարարության առաջարկով՝ երկրի բոլոր 56 դեպարտամենտներում ստեղծվեցին հատուկ հակաֆիլոքսերային կոմիտեներ, որոնք պետք է հսկողություն սահմանեին ներմուծվող տնկանյութի նկատմամբ և իրականացնեին կանխարգելիչ միջոցառումներ ֆիլոքսերայի ու բույսերի այլ վնասակար օրգանիզմների նկատմամբ: Արդյունքում այս կոմիտեները հաստատեցին, որ, ինչպես արդեն նշվել է, Ֆրանսիա են թափանցել ոչ միայն ֆիլոքսերան,

այլև այնպիսի վտանգավոր հիվանդություններ, ինչպիսիք են օիդի-
ուսը և միլդյու (խաղողի կեղծ ալրացողային հիվանդություններ):

Ֆրանսիայի օրինակին հետևելով՝ եվրոպական մի շարք երկր-
ներ, իսկ հետո նաև ԱՄՆ-ն սկսեցին բուսաբուծության բնագավա-
ռում իրականացնել կարանտինային սահմանափակումներ:

ԱՄՆ-ում կարանտինային օրենքն ընդունվել է 1912թ-ին, ինչը և
հիմք հանդիսացավ ԱՄՆ-ի գյուղատնտեսության նախարարության
կողմից երկրում կարանտինային համակարգ ներդնելու համար: Յե-
տազայում կոնգրեսը բազմաթիվ օրենքներ ընդունեց, որոնցում դի-
տարկվում էին կարանտինային ծառայության լրացուցիչ իրավունք-
ները և կարանտինի տակ գտնվող բեռնափոխադրումների վե-
րահսկման ուժեղացումը՝ թե դրսից բեռների ներկրման, թե երկրի
ներսում դրանց փոխադրման նկատմամբ: ԱՄՆ-ում մինչ օրս էլ
1912թ-ին ընդունված կարանտինային օրենքը համարվում է այս
ուլորտի գլխավոր օրենսդրական ակտը:

Սակայն կարանտինային միջոցառումների անցկացման փորձը
շուտով ցույց տվեց, որ երկրների առանձին վերցրած ջանքերը բա-
վարար չեն արդյունքի հասնելու համար: Անհրաժեշտություն առա-
ջացավ կնքել միջազգային համաձայնագրեր, որոնք հնարավորու-
թյուն կտան ապահովել տարբեր երկրների գործողությունների մի-
ասնությունը՝ մշակովի բույսերը վտանգավոր վնասատուներից, հի-
վանդություններից և մոլախոտերից պաշտպանելու համար:

Բույսերի կարանտինի համակարգի կազմակերպման առաջին
քայլը, միջազգային մասշտաբով, կատարվել է 1877թ-ին Լոզանում
(Շվեյցարիա), մի շարք երկրների ներկայացուցիչների՝ ֆիլոքսերա-
յով վարակմանը և Եվրոպայի հարավում վարակված խաղողի այգի-
ների ընդարձակ տարածքների ոչնչացմանը դիմակայելու նպատա-
կով հրավիրված խորհրդակցության ժամանակ:

1878թ-ի սեպտեմբերի 1-ին Բեռնում ընդունված առաջին միջազ-
գային համաձայնագիրը ստորագրեցին Գերմանիան, Ավստրո-Յուն-
գարիան, Շվեյցարիան, Ֆրանսիան, Բելգիան, Յուգոսլավիան: Յետա-
զայում համաձայնագրին միացան Իտալիան, Իսպանիան, իսկ առա-
ջին համաշխարհային պատերազմից հետո՝ նաև Չեխոսլավակիան

և Չարավսլավիան ըստ համաձայնագրի՝ միջազգային շուկայում
արգելվում էր խաղողի տնկիների և այլ տնկանյութի առևտուրը այն
երկրներից, որտեղ կան ֆիլոքսերայի օջախներ:

1881թ-ին Բեռնում կնքվեց երկրորդ միջազգային համաձայնագի-
րը, որը հանում էր վարակված վայրերից խաղողի և հատապտղային
կուլտուրաների տնկանյութի արտահանման վրա դրված արգելքն՝
այն պայմանով, որ տնկանյութի բաժնեմասներն արտահանվեն մի-
այն վարակման օջախներից մեկուսացված վայրերից: Չարկ է նշել,
որ 1881թ-ի համաձայնագրով ամրագրվեց ոչ միայն կենդանի բույ-
սերով բեռների, այլ նաև այդ բեռների ծագման վայրերի ստուգման
սկզբունքը: Յենց այս սկզբունք էլ հետագայում զարգացավ միջազ-
գային կարանտինային պրակտիկայում:

Համաձայնագրի անդամ երկրները պարտավոր էին իրենց երկր-
ներում ձևավորել բույսերի պաշտպանության ծառայություն, խաղո-
ղի այգիներում անցկացնել զննումներ՝ ֆիլոքսերայի օջախների
հայտնաբերման և դրանց չեզոքացման նպատակով, ուսումնասիրել
ֆիլոքսերայի կենսաբանությունն ու էկոլոգիան, դրա դեմ պայքարի
միջոցները և իրենց կողմից անցկացվող հետազոտությունների
արդյունքների ու ձեռքբերումների մասին ծանուցել համաձայնագրի
մյուս մասնակից երկրներին, հրապարակել ներմուծվող թույլատրե-
լի տնկանյութերի և մթերքների ցանկը:

Դիտարկվող ժամանակաշրջանում ֆիլոքսերայից բացի մի շարք
երկրներում հայտնաբերվեց նաև բամբակի ցեց՝ վարդագույն որդ,
կարտոֆիլի քաղցկեղ և բույսերի այլ վտանգավոր վնասատուներ ու
հիվանդություններ, ինչն էլ ավելի ընդգծեց գյուղատնտեսական
կուլտուրաների վնասակար օրգանիզմների դեմ համատեղ (միջազ-
գային մասշտաբով) պայքարի անհրաժեշտությունը:

1905թ. հունիսի 7-ին Յեռնում ընդունվեց Միջազգային գյուղատն-
տեսական ինստիտուտի կազմավորման մասին համաձայնագիր,
որն իր գործունեության առաջին իսկ օրվանից գյուղատնտեսությա-
նը վերաբերվող միջոցառումների թվում մեծ տեղ էր հատկացնում
բույսերի պաշտպանությանը՝ մշակելով ընդհանուր նորմեր և հրա-
պարակելով տեղեկություններ տարբեր երկրներում բույսերի վնա-

սակար օրգանիզմների տարածման, ինչպես նաև կարանտինային միջոցառումների անցկացման վերաբերյալ: 1910թ-ին, Միջազգային գյուղատնտեսական ինստիտուտի նախաձեռնությամբ, Հռոմում հրավիրվեց գյուղատնտեսական մշակաբույսերի վնասատուների և հիվանդությունների դեմ պայքարի Միջազգային կոնֆերանս, որի շրջանակներում մշակվեց վնասատուներից և հիվանդություններից բույսերի պաշտպանության Միջազգային համաձայնագրի նոր նախագիծ:

1914թ-ին, Ֆրանսիայի կառավարության նախաձեռնությամբ, 30 երկրների մասնակցությամբ հրավիրվեց խորհրդակցություն, որի ընթացքում լայնորեն քննարկվեց հավաստագրերի փոխանակման, բույսերի վնասակար օրգանիզմների դեմ համատեղ պայքարի վարման և այլ հարցեր: Կոնֆերանսում մշակվեց բույսերի պաշտպանության մասին Կոնվենցիան, որը, սակայն, կյանքի չկոչվեց առաջին աշխարհամարտի պատճառով: Միայն 1923թ-ին Հասագայում (Նիդեռլանդներ), մի շարք երկրների մասնակցությամբ, կրկին կայացավ բյուսերի վնասակար օրգանիզմների դեմ պայքարի կազմակերպմանն ուղղված խորհրդակցություն: Ստեղծվեց միջազգային գիտա-ժողովի կազմակերպման հարցով կոմիտե, իսկ կոնֆերանսը կայացավ 1929թ-ին Հռոմում՝ 24 երկրների մասնակցությամբ: Այստեղ ընդունվեց Հռոմի համաձայնագիրը (1929թ), որի նպատակն էր հնարավորության դեպքում ներառել բույսերի պաշտպանության և կարանտինի ողջ համակարգը, և, թեև չէր ներառում բույսերի վնասակար օրգանիզմների դեմ պայքարի անցկացման պարտադիր համագործակցության մասին դրույթ, սակայն ուներ տեղեկությունների և պայքարի միջոցների պարտադիր փոխանակման մասին կետ:

Հռոմի համաձայնագրի հիմնական դրույթներն էին.

- համաձայնագրի անդամ-երկրներում բույսերի կարանտինի և բույսերի պաշտպանության համար հատուկ գիտահետազոտական և օպերատիվ հաստատություններ կառուցում,
- բույսերի վնասակար օրգանիզմների ներմուծման և տարածման դեմ օրենսդրական և ղեկավար չափանիշների ներդրում,

- բույսերի այն վնասակար օրգանիզմների ցանկի պաշտոնական հրապարակում, որոնց դեմ տարվում են կարանտինային միջոցառումներ,

- կենդանի բույսերի ներմուծման և արտահանման նկատմամբ վերահսկողություն,

- հավաստագրերի փոխանակում՝ որպես միջոցառումների հիմք:

1925թ-ին նախկին ԽՍՀՄ-ում մեկնարկեցին կարանտինային օրենսդրության ստեղծման աշխատանքները: Հրապարակվեց ԽՍՀՄ ժողովրդական կոմիսարների խորհրդի որոշումը, որը կարգավորում էր կարտոֆիլի ներկրումը, մշակվեց համապատասխան հրահանգ: 1926թ-ին ընդունվեցին «Ֆիլոքսերայի դեմ պայքարի միջոցառումների մասին» և «բամբակագործության հսկողության մասին» որոշումները, ինչի արդյունքում կազմավորվեց հատուկ միջգերատեսչական բամբակագործական կարանտինային հանձնախումբ: 1931թ-ի հունիսի 5-ին, երբ դեռ գործում էր ԽՍՀՄ հողագործության ժողովրդավարական կոմիսարիատը, ստեղծվեց միասնական պետական կարանտինային ծառայություն և մշակվեց ներկրվող գյուղատնտեսական արտադրանքի կարանտինային վերահսկողության վերաբերյալ կանոնադրությունը: 1934թ-ին հրապարակվեց ԽՍՀՄ ժողովրդական կոմիսարների խորհրդի «Գյուղատնտեսական և անտառային վնասատուների ներթափանցումից և տարածումից ԽՍՀՄ տարածքը ապահովելու մասին» որոշումը, ինչպես նաև մշակվեցին բույսերի արտաքին կարանտինի վերաբերյալ կանոնադրությունը և ԽՍՀՄ համար հաստատված արտաքին կարանտինի բույսերի վնասատուների և հիվանդությունների ցանկը:

Բույսերի կարանտինի և բույսերի պաշտպանության միջազգային կոնվենցիա (համաձայնագիր) (ԲԿԲՊՄՀ)

Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո ՄԱԿ-ի Պարենային և գյուղատնտեսական կազմակերպությունը(ՊԳԿ) մշակեց ԲԿԲՊՄՀ-ի նախագիծը, որը ստորագրվեց Հռոմում 1951թ-ի դեկտեմբերի 6-ին:

Համաձայնագիրն ընդունվեց 50 երկրների կողմից՝ փոխարինելով ավելի վաղ՝ 1881, 1889, 1929 թթ-ին, ընդունված և արդեն հնացած համաձայնագրերին: Նոր իրավական նորմը մեծ նշանակություն ունեցավ բույսերի կարանտինի միջազգային վարչակարգերի ամրապնդման և բուսական ծագում ունեցող ապրանքների առևտրի զարգացման համար:

Հետագա տարիներին բույսերի կարանտինի միջազգային օրենսդրությունն ավելի զարգացավ. 1951թ-ին ընդլանվեց ԲԿԲՊՄՅ-ի կիրառման շրջանակը՝ հատկապես բուսերի կարանտինի և պաշտպանության կազմակերպման ազգային մակարդակով, ճշգրտվեց բուսասանիտարական վավերագրի՝ կարանտինային հավաստագրի տեքստի միասնական ձևը, կոնկրետացվեցին ներմուծվող բեռների նկատմամբ բուսասանիտարական (կարանտինային) ընդհանուր պահանջները:

Նախկին ԽՍՀՄ-ը համաձայնագրին միացավ 1956թ-ի ապրիլի 24-ին: 1997թ-ին, ՊԳԿ կոնֆերանսի 29-րդ նստաշրջանի ընթացքում, Համաձայնագրի տեքստը 2 անգամ վերանայվեց: Ներկայումս գոյություն ունեին երեք հիմնական փաստաթուղթ, որոնք որոշում են բուսասանիտարական կարանտին վերահսկման նորմատիվ-իրավական պահանջները աշխարհի բոլոր երկրներում: Այդ պահանջներն այն հիմնարար սկզբունքներն են, որոնց վրա կառուցված են յուրաքանչյուր երկրի ազգային կարանտինային կանոնները կամ օրենսդրությունը:

Այդ հիմնական փաստաթղթերն են՝

1. Բույսերի պաշտպանության միջազգային համաձայնագիրը (ԲԿԲՊՄՅ, 1951, 1979, 1997, 2005թթ, (էլ. հավելված հայ. և ռուս.)),
2. Սանիտարական և բուսասանիտարական միջոցների կիրառման մասին առևտրի համաշխարհային կազմակերպության (ԱՅԿ) համաձայնագիրը (ՍԲՄԿՅ), (էլեկ.հավելված հայեր.և ռուսեր),
3. Բույսերի կարանտինի սկզբունքները՝ կապված միջազգային առևտրի հետ (Բուսասանիտարական միջոցառումների միջազգային չափորոշիչներ (ԲՄՄՉ) 1995թ.Ո1): (էլեկ.հավելված հայեր.և ռուսեր), 1962թ-ին հաստատվեց ԽՍՀՄ-ում բույսերի կարանտինի պետա-

կան ծառայության կանոնադրությունը, իսկ 1967թ-ին՝ բույսերի արտաքին կարանտինի կանոնները՝ կարանտինային օբյեկտների (ընդամենը 69 տեսակ) նոր ցանկի հետ միասին: Կարանտինային ծառայությունը մտնում էր գյուղատնտեսության նախարարության կազմի մեջ և ներկայացված էր որպես կարանտինի պետական տեսչություն՝ պետկարանտին: Վերջինս բույսերի կարանտինի ոլորտում իրականացնում էր օպերատիվ գործողությունների պլանավորում և կազմակերպում, խորհրդային և ինքնավար հանրապետություններում, երկրամասերում, մարզերում և ինքնավար մարզերում բույսերի պաշտպանության պետական և սահմանային պետական տեսչությունների կողմից այդ գործողությունների կատարման ղեկավարում և վերահսկողություն (կարանտինային լաբորատորիաների միջոցով):

Բույսերի պաշտպանության գիտահետազոտական և մեթոդական հաստատությունը սկզբում գյուղատնտեսության նախարարության բույսերի կարանտինի կենտրոնական գիտահետազոտական լաբորատորիան էր, որն անմիջականորեն ենթարկվում էր ԽՍՀՄ գյուղատնտեսության բույսերի կարանտինի պետական տեսչությանը, իսկ հետագայում՝ բույսերի կարանտինի Համախորհրդային գիտահետազոտական ինստիտուտին:

Ծառայության մեջ ներառված էին բույսերի կարանտինի 162 պետական տեսչություններ՝ խորհրդային, ինքնավար հանրապետություններում, երկրամասերում և մարզերում, 140 սահմանային և 438 միջշրջանային կետեր, 28 լաբորատորիաներ և 26 ֆունիզացիոն ջրկատներ՝ մասնագետների 3.5 հազար ընդհանուր հաստիքային թվաքանակով:

Համաձայնագրի վերանայումը պայմանավորված էր սանիտարական և բուսասանիտարական չափանիշների հետ ԱՅԿ համաձայնագրի ստորագրմամբ:

Սանիտարական և բուսասանիտարական միջոցառումների կիրառման համաձայնագրի (ՍԲՄԿՅ) վերաբերյալ հաստատված են կանոններ, որոնք ԱՅԿ մասնակից-երկրները պարտավոր են հաշվի առնել միջազգային առևտրի վրա ներգործող սանիտարականիսար-

գելիչ նորմերի մշակման ժամանակ: Համաձայնագրի նպատակը առևտրի չարդարացված սահմանափակումների վերացումն է, այսինքն՝ առևտրի պաշտպանությունը և միջազգային առևտրային ուղիներով կարանտինային օրգանիզմների տարածման կանխարգելումը:

Համաձայնագրի տեքստի բնագիրն ընդունվել է 1979թ-ին, որին 1982թ-ին միացել է ԽՍՀՄ-ը: Ռուսաստանի Դաշնությունը՝ որպես ԽՍՀՄ-ի իրավահաջորդ, հանդիսանում է ԲԿԲՊՄՀ-ի մասնակից՝ 110 այլ երկրների հետ համատեղ:

1997թ-ին համաձայնագրի տեքստը վերանայվել և ընդունվել է ԲԿԲՊՄՀ 13 անդամ-երկրների կողմից:

Վերջին վերանայումը եղել է 2005թ-ի հոկտեմբերին:

Համաձայնագիրը նախատեսում է միջազգային համագործակցության բազմաթիվ ձևաչափեր: Համաձայնագրի գործողության շրջանակը ներառում է՝

- միջազգային առևտրի ժամանակ կարանտինային վնասակար օրգանիզմների ներթափանցման և տարածման կանխարգելման ասպարեզում միջազգային համագործակցության ապահովումը,
- առավել վտանգավոր զանգվածային վնասակար օրգանիզմների դեմ պայքարի միջազգային ջանքերի ամրապնդումը,
- յուրաքանչյուր երկրի կողմից համաձայնագրի իրականացմանը ծառայող նորմատիվ-իրավական և տեխնիկական համաձայնեցված չափանիշների ընդունումը,
- կարանտինի տակ գտնվող արտադրանքի արտահանման և վերաարտահանման միասնական բուսասանիտարական հավաստագրերի կիրառումը:

ԲԿԲՊՄՀ-ն յուրաքանչյուր անդամ-երկրին տալիս է կարանտինային ստուգման և կարանտինի տակ գտնվող վարակված բեռների կասեցման իրավունք:

ԲԿԲՊՄՀ-ը բաղկացած է 23 հոդվածից, որոնցից 8-ում շարադրված են միջազգային առևտրի և փոխադրումների ժամանակ կարանտինային բուսասանիտարական անվտանգության ապահովմանը վերաբերող առավել կարևոր դրույթներ: Առաջին հերթին դա 4-րդ

հոդվածն է՝ ազգային ծառայությունների գործունեության ընդհանուր դրույթների և հիմնական գործառնական պարտականությունների վերաբերյալ, և 5-րդը՝ կարանտինի տակ գտնվող արտադրանքի բուսասանիտարական հավաստագրման վերաբերյալ:

Համաձայնագրի վերանայված տեքստը ներառում է մի շարք սկզբունքներ, որոնք պետք է ընկած լինեն կարանտինային բուսասանիտարական նորմատիվների և մեթոդական հանձնարարականների հիմքում: Համաձայնագրի հիմնական պահանջը հետևյալն է. ազգային կարանտինային բուսասանիտարական կանոնները պետք է հիմնվեն լինեն միջազգային մեթոդական հանձնարարականների կամ չափորնիշների վրա՝ հաստատված ՊԳԿ-ի կողմից: Ներկայումս ընդունված են 34 այդպիսի՝ բուսասանիտարական միջոցառումների միջազգային չափորնիշներ (ԲՄՄԶ):

Մեծ կարևորություն է ներկայացնում նաև համաձայնագրի 7-րդ հոդվածը, որում հաստատվում է յուրաքանչյուր մասնակից երկրի իրավունքը՝ իրականացնել կարանտինի տակ գտնվող արտադրանքի ներկրման կանոնակարգում ելնելով ազգային շահերից:

Առևտրի համաշխարհային կազմակերպություն (ԱՀԿ)

Սակագների և առևտրի գլխավոր համաձայնագրի շրջանակներում կայացած բանակցությունների ուրուգվայական շրջափուլն ավարտվել է 1994թ-ի ապրիլին, որի արդյունքում ստեղծվեց առևտրի համաշխարհային կազմակերպությունը (ԱՀԿ): Այն հսկում է միջազգային համաձայնագրերի պայմանների կատարումը, օժանդակում է ԱՀԿ-ի անդամ-երկրների միջև առևտրի հետագա ազատականացմանը և ղեկավարում վեճերի կարգավորման համակարգը: Արդյունքում ընդունվեցին մի շարք լիամասշտաբ առևտրային համաձայնագրեր, ներառյալ՝ «Սանիտարական և բուսասանիտարական չափանիշների կիրառման մասին համաձայնագիրը» (էլ. հավելված հայ. և ռուս.):

Այս համաձայնագրի հիմնական սկզբունքներն են՝

- երկրները պարտավոր են ունենալ և պահպանել բույսերի կարանտինի պաշտոնական կազմակերպություն (ԲԿԲՊԱԿ),

- երկրներն իրավունք ունեն կիրառել սանիտարական և բուսասանիտարական սեփական չափանիշներ (էլ. հավելված հայ. և ռուս., ՍԱՊԾ հրամաններ), որոնք անհրաժեշտ են մարդկանց, կենդանիների և բույսերի առողջության պաշտպանության համար, սակայն այդ բոլոր չափանիշները պետք է հիմնված լինեն գիտական և միջազգային չափանիշների վրա,

- յուրաքանչյուր կարանտինային օրգանիզմի նկատմամբ կիրառվող չափանիշները պետք է հիմնված լինեն բուսասանիտարական ռիսկի վերլուծության վրա (ԲՌՎ),

- ռիսկի գնահատման ժամանակ վերլուծության են ենթարկվում վնասակար օրգանիզմների՝ տվյալ գոտի ներթափանցելու, տվյալ կլիմային հարմարվելու և տնտեսական վնաս հասցնելու հնարավորությունները,

- ԲՌՎ-ն թույլ է տալիս ընտրել տվյալ օրգանիզմին համապատասխան կարանտինային չափանիշներ,

- կարանտինային վնասակար օրգանիզմներից ազատ գոտու սկզբունքը ենթադրում է, որ եթե որևէ երկիր չի ստեղծում արգելքներ ապրանքի ներմուծման համար, իսկ մյուսը կարող է ապացուցել, որ իր տարածքում առկա են տվյալ վնասակար օրգանիզմներից ազատ գոտիներ, ուրեմն հիմք չկա այդպիսի գոտիներից արտադրանքի ներմուծման սահմանափակման համար:

Երկրի կառավարությունը կարող է վիճարկել այլ երկրի կողմից առաջ քաշված կենդանիների և բույսերի կարանտինին վերաբերող պահանջները, եթե վերջիններս չունեն բավարար գիտական հիմնավորումներ: Այդ դեպքում մյուս երկիրը պետք է ներկայացնի իր պահանջների իրավացիությունը հաստատող ապացույցներ: Եթե հիմնավորումն ընդունված է, ապա վեճը համարվում է լուծված, եթե ոչ՝ հրավիրվում է միջազգային փորձագետների խորհրդակցություն, որի որոշումը համարվում է վերջնական:

Բուսասանիտարական անվտանգության համար կիրառվող չափանիշների շուրջ առաջացած միջազգային վեճերի կարգավորման

հիմք են միջազգային չափանիշները, ՊԳԿ-ի ձեռնարկները, հանձնարարականները, ինչպես նաև համաձայնագրի դրույթները:

Բուսասանիտարական չափանիշների մասին երկկողմանի համաձայնագրերի (որոնք յուրաքանչյուր պետություն հարկադրված է պարբերաբար կնքել զրոյից) կնքման պրակտիկայի փոխարեն խորհուրդ է տրվում կիրառել բազմակողմանի մոտեցում, համաձայն որի յուրաքանչյուր երկրի կարանտինային պահանջները ենթարկվում են բաց հրապարակման: Այդ պահանջները պետք է որքան հնարավոր է համապատասխանեն միջազգային չափանիշներին:

ԱՂԿ-ի (ՀՀ-ը անդամակցում է 2003թ-ից) երկրները պետք է պատրաստ լինեն պարբերական, այսինքն բուսասանիտարական իրադրությունից կախված, փոփոխություններին և անհապաղ հրապարակեն դրանք:

Բեռների ներմուծման մերժման դեպքում, որը կապված է բուսասանիտարական կանոնների կատարման անհնարինության հետ, խորհուրդ է տրվում այդ մասին անհապաղ տեղեկացնել արտահանող երկրին, որպեսզի վերջինս կարողանա ընդունել այդպիսի դեպքերի կրկնությունը կանխարգելող չափանիշներ:

Կարանտինային օրգանիզմների ներթափանցման և տարածման կանխարգելման համար երկրները պետք է համագործակցեն այդ օրգանիզմների դեմ պայքարի մեթոդների զարգացման հարցում:

Սանիտարական և բուսասանիտարական չափանիշները, ինչպես հայտնի է, որոշակի դժվարություններ են ստեղծում առևտրում: Յուրաքանչյուր երկրի կառավարություն գիտակցում է, որ կանոնակարգման ներմուծումը թելադրված է մարդու, կենդանիների և բույսերի առողջության պաշտպանության անհրաժեշտությամբ: Բայց, երբեմն, սանիտարական և բուսասանիտարական սահմանափակումները կիրառվում են որպես հայրենական արտադրողներին տնտեսական մրցակցությունից պաշտպանելու միջոց:

ՍԲՄԿՀ-ի հիմնական նպատակն այն է, որ ցանկացած կառավարություն ունենա սուվերենային իրավունք՝ ապահովելու սանիտարական և բուսասանիտարական պաշտպանության այնպիսի մակարդակ, որը հարկավոր է տվյալ երկրին և միջազգային առևտրի

Ճանապարհին ավելորդ խոչընդոտներ չի հարուցում:

Համաձայնագիրը նպաստում է պետության մասշտաբով այնպիսի սանիտարական և բուսասանիտարական չափանշիների ընդունմանը, որոնք կհամապատասխանեն միջազգային նորմերին, հրահանգներին ու հանձնարարականներին: Այդպիսի կարգը հաճախ անվանում են ներդաշնակություն:

Մեծամասամբ միջազգային նորմատիվներն ավելի վեր են կանգնած այն պահանջներից, որոնք հաստատվում են երկրի ներսում: Եթե պետական նորմատիվային պահանջները ավելի բարձր են և հանգեցնում են առևտրի էական սահմանափակման, ապա այդ երկրից կարող է պահանջվել գիտական հիմնավորում առ այն, որ միջազգային նորմը չի ապահովում տվյալ երկրում ընդունված սանիտարական և բուսասանիտարական պաշտպանության անհրաժեշտ մակարդակը:

Համաձայն սույն համաձայնագրի՝ կառավարությունները նաև պետք է ճանաչեն կարանտինային վնասակար օրգանիզմներից զերծ գոտիները և շրջանները, որոնք կարող են ամբողջապես կամ մասնակիորեն ներառել մեկ կամ մի քանի երկրներ: Ըստ այդմ՝ արտադրանքի ներմուծումը այդպիսի գոտիներից չպետք է կանոնակարգվի: Հարկ է նշել, որ նախկին ԽՍՀՄ-ում բույսերի արտաքին կարանտինին վերաբերվող կանոնները մեծամասամբ բացառում էին կարանտինի տակ գտնվող արտադրանքի ներթափանցումը այն երկրներից, որտեղ տարածված էին կարանտինային վնասակար օրգանիզմները: ՍԲՄԿ համաձայնագիրը նախատեսում է խտրականության հիմնավորվածության վերստուգում և օգնում է լուծել հարցը՝ ելնելով կամ ազգային արտադրողների, կամ էլ արտասահմանյան մատակարարների շահերից:

Համաձայնագրի տարբերիչ առանձնահատկություններից մեկն էլ հետևյալն է. ԱՀԿ-ի բոլոր անդամ-երկրները պետք է սահմանեն իրենց բուսասանիտարական կանոնակարգերը՝ հիմնվելով նոր կարանտինային վնասակար օրգանիզմների՝ դեպի երկրի տարածք ներթափանցման փաստացի ռիսկի գնահատման վրա: Միևնույն ժամանակ անհրաժեշտ է տեղեկացնել, թե ի՞նչ գնահատման մեթոդ-

ներ են կիրառվել և ռիսկի ո՞ր մակարդակն է ընդունվել որպես թուլատրելի: Սրա հետ մեկտեղ համաձայնագիրը նախատեսում է բոլոր տեսակի արտադրանքների և ԱՀԿ-ի բոլոր անդամ-երկրների նկատմամբ ռիսկի համակարգային գնահատման լայն կիրառություն:

Պետությունների կարանտին /բուսասանիտարական/ սահմանափակումների նկատմամբ ԱՀԿ-ի հիմնական պահանջներից մեկը պայմանավորված է դրանց տեխնիկական հիմնավորվածությամբ: Կարանտին միջոցները, որոնք տեխնիկապես հիմնավորված չեն, դիտվում են որպես առևտրի չարդարացված պատնեշներ: Բույսեր և բուսական արտադրանք արտահանող պետությունները իրավունք ունեն ԱՀԿ-ին բողոքարկել ներկրող պետությունների կողմից բուսասանիտարական միջոցների տեխնիկական հիմնավորվածության անհամապատասխանության մասին: Բուսասանիտարական ռիսկերի հետազոտությունը հիմք է բույսերի կարանտին միջոցների տեխնիկական հիմնավորվածության համար: Միջազգային չափանիշներին համապատասխանեցված, գրագետ իրականացված և մանրագնին արձանագրված բուսասանիտարական ռիսկերի հետազոտությունը հիմք է տվյալ տեսակի վնասատուն, բույսերի հիվանդությունը կամ մոլախոտերը կարանտին օրգանիզմների ցանկում ընգրկելու, ինչպես նաև դրանց նկատմամբ կարանտին միջոցներ կիրառելու համար:

ԱՀԿ-ի շրջանակներում ստեղծվել է սանիտարական և բուսասանիտարական չափանիշների հատուկ կոմիտե, որը հետևում է համաձայնագրի կատարմանը, քննարկում է առևտրի ընթացքի վրա դրա հնարավոր ազդեցության հարցերը և պահպանում սերտ համագործակցություն համապատասխան տեխնիկական կազմակերպությունների հետ:

Բույսերի կարանտինի սկզբունքը՝ կապված միջազգային առևտրի հետ (Բուսասանիտարական չափանիշների միջազգային չափորոշիչ (ԲՄՍՀ) No-1, 1995, ՊԳԿ, Հոռնմ):

Հիմնարար սկզբունքները, որոնց վրա անհրաժեշտ է հիմնվել ազգային բուսասանիտարական կանոնների մշակման ժամանակ, համաձայն ԲՄՍՀ No-1-ի, կայանում են հետևյալում՝ (էլ. հավելված հա-յ. և ռուս.),

1. Սուվերենություն (ինքնիշխանություն): Յուրաքանչյուր երկիր կարող է մշակել սուվերեն բուսասանիտարական չափանիշներ, որոնք կարգավորում են կարանտինի տակ գտնվող արտադրանքի ներկրումը երկրի տարածք՝ կարանտինային վնասակար օրգանիզմների (ԿՎՕ) մուտքը և տարածումը կանխարգելելու նպատակով:

2. Անհրաժեշտություն: Երկրները պետք է սահմանեն այնպիսի բուսասանիտարական չափանիշներ, որոնք պայմանավորված են անհրաժեշտությամբ և որոնք ապահովում են ԿՎՕ-ի ներթափանցման և տարածման կանխարգելումը:

3. Նվազագույն ազդեցություն: Յուրաքանչյուր երկրի բուսասանիտարական չափանիշները պետք է հնարավոր նվազագույն չափով ազդեն միջազգային առևտրի, տուրիզմի և տրասպորտային փոխադրումների սահմանափակման վրա:

4. Մոդիֆիկացիա (ձևափոխություն): Պայմանների փոփոխության դեպքում՝ բուսասանիտարական չափանիշները պարտադիր փոփոխվում են՝ անհրաժեշտ սահմանափակումների կամ ոչ անհրաժեշտ պահանջների բացառման կիրառման սկզբունքով:

5. Հրապարակայնություն: Հարցման դեպքերում՝ երկրներում պետք է թողարկվեն և տարածվեն բուսասանիտարական կանոններին առնչվող ցանկացած լրացուցիչ տեղեկություններ, ներառյալ՝ ընդունած չափանիշների ռացիոնալությունը (բանայնությունը):

6. Ներդաշնակեցում: Երկրներում կիրառվող բուսասանիտարական չափանիշները պետք է հիմնված լինեն ընդունված միջազգային ստանդարտների կամ հանձնարարականների վրա՝ մշակված MKՅՔ

չրջանակներում:

7. Համարժեքություն: Երկրներում կիրառվող բուսասանիտարական չափանիշները թեև նույնական չեն, սակայն տալիս են նույնպիսի էֆեկտ, ուստի և համարժեք են:

8. Վիճահարույց հարցերի քննարկումային (դիսկուսիոն) կարգավորում: Վիճահարույց հարցերը նախընտրելի է լուծել երկկողմ մակարդակով և միայն ծայրահեղ դեպքերում՝ բազմակողմ հիմքի վրա:

9. Համագործակցություն: Երկրները պարտավոր են համագործակցել՝ ԿՎՕ ներթափանցման և տարածման կանխարգելման նպատակով, և անցկացնել ԿՎՕ դեմ պայքարն ապահովող միջոցառումներ:

10. Տեխնիկական իրավասություն: Արտահանող բեռների հավաստագրմանն ուղղված միջոցառումների իրականացման և բուսասանիտարական հավաստագրի հանձման ոլորտում երկրները պետք է ունենան կարանտինի և բույսերի պաշտպանության ազգային իրավասու մարմիններ:

11. Ռիսկի վերլուծություն: Վնասակար օրգանիզմների (ՎՕ) կարանտինային կարգավիճակի որոշման նպատակով, պարզաբանելու համար, թե երկրի կողմից ընդունվող չափանիշներն ինչո՞վ են պայմանավորված՝ երկրները պետք է ընդունեն ՎՕ ներթափանցման ռիսկի գնահատման մեթոդներ՝ հիմնվելով կենսաբանական և տնտեսական տվյալների վրա՝ հնարավորինս հետևելով համապատասխան միջազգային կազմակերպությունների կողմից ընդունված ստանդարտներին ու հանձնարարականներին:

12. Կառավարվող ռիսկ: Քանի որ ԿՎՕ ներթափանցման ռիսկը միշտ առկա է, հետևաբար երկրները պետք է համաձայնվեն մշակել բուսասանիտարական չափանիշներ, որոնք կհանգեցնեն կառավարվող ռիսկի քաղաքականությանը:

13. ԿՎՕ-ից ազատ գոտի: Երկրները պետք է կիրառեն ԿՎՕ-ից ազատ գոտու ստատուսի (կարգավիճակի) վերահսկողություն: Ահրաժեշտության դեպքում երկրները ներկայացնում են ԿՎՕ-ից ազատ գոտու առկայության ապացույցներ՝ օգտվելով համապատասխան միջազգային կազմակերպությունների կողմից մշակված ստանդարտներից և մեթոդներից:

14. Արտակարգ չափանիշներ: Երկրները կարող են ընդունել ժամանակավոր արտակարգ չափանիշներ (միջոցներ), եթե առկա է ԿԿՕ ներթափանցման անմիջական սպառնալիք: Հետագայում այդպիսի չափանիշները պետք է հիմնավորվեն տվյալ ԿԿՕ-ի պտտեցիվալ ռիսկի ամբողջական վերլուծությամբ:

15. Չհամաձայնեցված փոփոխությունների մասին ծանուցում: Ներկրող երկրները պետք է ժամանակին տեղեկացնեն փորձագետների և բուսասանիտարական սահմանափակումների կամ պահանջների չհամաձայնեցված փոփոխությունների մասին:

16. Դիսկրիմինացիայի (խտրականության) բացառում Երկրները պետք է ընդունեն բուսասանիտարական կանոններ՝ բացառելով միմյանց նկատմամբ խտրականության դրսևորումները, այն է՝ պետք է իրականացնեն նույնական կամ համարժեք բուսասանիտարական միջոցառումներ:

Բույսերի կարանտինի և բույսերի պաշտպանության եվրոպական և միջերկրածովյան կազմակերպություն (ԲԿԲՊԵԿ)

1951թ-ի համաձայնագրում նախատեսված էր երկրների, (էլ. հավելված ռուս.), միջև երկկողմանի կամ բազմակողմանի լրացուցիչ համաձայնագրերի՝ և պայմագրերի կնքում, ինչպես նաև՝ համապատասխան տարածաշրջանային միջազգային կազմակերպությունների հիմնում:

Այդ կապակցությամբ՝ 1951թ-ի ապրիլի 18-ին մի շարք արևմտաեվրոպական երկրների կողմից ստորագրվել է բույսերի պաշտպանության եվրոպական և միջերկրածովային կազմակերպության (ԲԿԲՊԵԿ) ստեղծման մասին համաձայնագիր: ԲԿԲՊԵԿ հիմնադրմանը, 1951թ-ի հռոմեական համաձայնագրի շրջանակներում, հետևեց 1956թ-ին «Հարավարևելյան Ասիայի և Խաղաղօվկիանոսյան ավազանի բույսերի պաշտպանություն» կազմակերպության ստեղծման մասին համաձայնագրի ստորագրումը մի շարք երկրների կողմից: ԲԿԲՊԵԿ-ն մասնակից պետություններին տրամադրում է

խորհրդատվություններ և ցուցաբերում անմիջական օգնություն, առևտրի ժամանակ կարանտին վնասակար օրգանիզմների տարածումը կանխելու կամ խիստ սահմանափակելու համար անհրաժեշտ վարչական և օրենսդրական ակտերի կազմման գործում:

ԲԿԲՊԵԿ հիմնական խնդիրները

Մշակել ԲԿԲՊԵԿ անդամ-պետությունների կենսաաշխարհագրական տարածաշրջաններ ԿԿՕ ներթափանցումից և տարածումից պաշտպանության քաղաքականություն, մասնավորապես՝ համապատասխանեցնելով բուսասանիտարական օրենսդրությունը: Այն է՝ (էլ. հավելված ռուս.),

- ապահովել կարանտինի և բույսերի պաշտպանությանն առնչվող բոլոր այն հիմնական հարցերի համակարգում և համապատասխանեցումը , որոնց վերաբերյալ անդամ-պետությունների կառավարություններն իրականացնում են պետական միջոցառումներ (բուսական և այլ արտադրանքի ներմուծման և արտահանման կարանտին կանոններ, կանխորոշման և ազդանշան համակարգ և այլն),

- աջակցել բույսերի պաշտպանության և կարանտինի բնագավառում ժամանակակից մեթոդների և տեխնոլոգիաների մշակմանն ու ներդրմանը,

- իրականացնել տեղեկատվության փոխանակում գործունեության բոլոր ուղղություններով:

ԲԿԲՊԵԿ-ն իր գործունեությունն իրականացնում է 9 աշխատանքային խմբերի և 12 հանձնաժողովների, ինչպես նաև կարանտինի և բույսերի պաշտպանության ուղղությամբ պարբերաբար անցկացվող համաժողովների միջոցով:

ԲԿԲՊԵԿ տեխնիկական գործունեությունը բուսասանիտարական օրենսդրության և բույսերի պաշտպանության միջոցների ստեղծման ուղղությամբ, հիմնականում իրականացվում է 2 աշխատանքային խմբերի միջոցով:

ԲԿԲՊԵԿ անդամ-երկրներն են Ավստրիան, Ադրբեջանը, Ալբանի-

ան, Ալժիրը, Բելառուսն, Բելգիան, Բոսնիա և Հերցեգովինան, Բուլղարիան, Մեծ Բրիտանիան, Հունգարիան, Գերմանիան, Հունաստանը, Գերմանիան, Դանիան, Ջերսին, Իսրայելը, Հորդանանը, Իռլանդիան, Իսպանիան, Իտալիան, Ղազախստանը, Կիպրոսը, Ղրղզստանը, Լատվիան, Լիտվան, Լյուքսեմբուրգը, Մակեդոնիան, Մալթան, Մոլդովան, Մարոկոն, Նիդերլանդները, Նորվեգիան, Լեհաստանը, Պորտուգալիան, Ռումինիան, Ռուսաստանը, Սերբիան, Սլովակիան, Սլովենիան, Թունիսը, Թուրքիան, Ուզբեկստանը, Ուկրաինան, Ֆրանսիան, Չեխիան, Շվեյցարիան, Շվեդիան, Էստոնիան:

ԱՊՀ անդամ-պետությունների բույսերի կարանտինի համակարգման խորհուրդը

1992թ. նոյեմբերին ԱՊՀ անդամ-պետությունների միջև ստորագրվել է բույսերի կարանտինի բնագավառում միջկառավարական համագործակցության համաձայնագիր:

Համաձայնագրի շրջանակներում Բալթյան և ԱՊՀ անդամ-պետություններում ստեղծվել է բույսերի կարանտինի տեղեկատվական համակարգման խորհուրդ: Տեղեկատվական համակարգման խորհուրդը ապահովում է հետադարձ կապը Բալթյան և ԱՊՀ անդամ-պետությունների բույսերի կարանտինի ծառայությունների միջև և պատասխանատվություն է կրում բույսերի կարանտինի վերաբերյալ աշխատանքային համաժողովներ կազմակերպելու համար: Աշխատանքային համաժողովները հերթականությամբ անցկացվում են անդամ-պետությունների տարածքներում: Ամենամյա աշխատանքային համաժողովների նպատակը բույսերի կարանտինի բնագավառում մտքերի և գործնական փորձի և, անդամ-պետությունների տարածքներում գործող բույսերի կարանտինի կանոնների վերաբերյալ տեղեկատվության փոխանակումն է, ինչպես նաև, փոխադարձ հետաքրքրությամբ պայմանավորված, բույսերի կարանտինի հետ կապված տարբեր հարցերի և խնդիրների լուծումը՝ հաշվի առնելով կարանտին արտադրանքի ներմուծման, արտահանման և տարանցման աճը:

Համաձայն կարանտինի բնագավառում 1992թ. նոյեմբերի 13-ին ստորագրված համագործակցության համաձայնագրի, ԱՊՀ անդամ-պետությունների կողմից փորձի փոխանակման, գործնական և գիտական խնդիրները քննարկելու նպատակով՝ 2007թ-ին. 14-րդ համաժողովն անցկացվել է Հայաստանում: 15-րդ համաժողովը տեղի ունեցավ 2009թ Մոսկվայի մերձակայքում գտնվող Բիկովո բնակավայրում, որտեղ որոշվեց գործադիր կոմիտեի քարտուղարության և ԱՊՀ տնտեսական միության քննարկմանը ներկայացնել համակարգման խորհուրդ ստեղծելու մասին համապատասխան փաստաթղթեր:

Որոշումը ստորագրվեց Ադրբեյջանի, Հայաստանի, Բելառուսի, Ղազախստանի, Ռուսաստանի, Մոլդովայի, Տաջիկստանի, Ուզբեկստանի ներկայացուցիչների կողմից:

2012թ. Մոսկվայում կայացած համակարգման խորհրդի առաջին նիստի ժամանակ նախագահող պետություն ընտրվեց Հայաստանը՝ ամեն տարի նախագահող պետությունները հերթականությամբ փոխվելու սկզբունքով:

Ռուսասանիտարիան Հայաստանի Հանրապետությունում

Ինչպես վկայում են արխիվային փաստաթղթերը և տարեկան հաշվետվությունները, ոչ վաղ անցյալում Հայաստանի բույսերի կարանտինի և բույսերի պաշտպանության ծառայությունը համարվում էր լավագույներից մեկը նախկին ԽՍՀՄ-ում: Անկախությունն հռչակումից հետո էլ շարունակվեց կարանտինային ծառայության գործառույթների իրականացումը, մասնավորապես՝ կարանտին օրգանիզմների ներթափանցման կանխումը հանրապետություն, բույսերի վնասակար օրգանիզմների արեալի նվազեցումը, օջախների տեղայնացման և լուծարման միջոցառումների անցկացումը, ինչպես նաև սահմանային հսկիչ կետերի կազմակերպումը:

Համատեղ անցկացվել են վարչական և օրենսդրական բարեփոխումներ, որոնք ուղղված էին հանրապետությունում ծառայության գործունեության և բուսասանիտարական վիճակի բարելավմանը:

Այդպես, 2000թ. ընդունվեց «Բույսերի պաշտպանության և կարանտինի մասին» օրենքը, իսկ 2002թ. Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշմամբ, ստեղծվեց Գյուղատնտեսության նախարարությանը կից «Բույսերի կարանտինի պետական տեսչություն» առանձնացված մասնագիտացված ստորաբաժանումը: 2005թ. ՀՀ կառավարության որոշմամբ տեղի ունեցավ երկու նմանատիպ ուղղվածություն ունեցող՝ «Բույսերի կարանտինի պետական տեսչության» և «Հողագործության պետական ծառայության», կազմակերպությունների միավորում և ստեղծվեց նոր՝ «Բույսերի կարանտինի և հողագործության պետական տեսչությունը»: Բույսերի կարանտինի բաժինը համակարգում էր 6 սահմանային հսկիչ կետերի գործունեությունը. Իրանի սահմանի հետ՝ Մեղրին, Վրաստանի սահմանի հետ՝ Բագրատաշենը, Բավրան, Գոգավանը, Այրումը և «Զվարթնոց» միջազգային օդանավակայանը:

Բույսերի կարանտինի և հողագործության պետական տեսչության գործառույթներն էին՝

- կարանտին և կարգավորվող ոչ կարանտին վնասատուների բացահայտումը և դրանց դեմ պայքարը,
- կարանտին հսկողության ենթակա արտադրանքի զննման միջոցառումների կազմակերպումը,
- նմուշառումը և փորձաքննությունը,
- բույսերի և բուսական արտադրանքի ներմուծման, արտահանման, վերաարտահանման բուսասանիտարական կանոններին հետևելու, ինչպես նաև բույսերի և բուսական արտադրանքի արտադրման, վերամշակման, կանխատեսման, ախտորոշման և զանգվածային բազմացման, բույսերի վնասակար օրգանիզմների տարածման հսկողությունը,
- թունաքիմիկատների և պարարտանյութերի օգտագործման վերահսկողությունը,
- սերմերի և տնկանյութի ներմուծումը, իրացումը, տեղափոխումը, ինչպես նաև պարարտանյութերի և բույսերի պաշտպանության այլ միջոցների պահեստավորումը և օգտագործումը:

Բույսերի կարանտինի և հողագործության պետական տեսչու-

թյան աշխատանքն իրականացվում էր համաձայն 2005-2009թթ. ռազմավարական ծրագրի, որը հաստատել էր Գյուղատնտեսության նախարարությունը:

2007թ. հաստատված կարանտին և կարգավորվող ոչ կարանտին վնասակար օրգանիզմների ցուցակի սահմանափակ տարածված վնասակար օրգանիզմների բաժնում ներառված են 9՝ արևելյան պտղակեր, կալիֆորնիական վահանակիր, ֆիլոքսերա, ցիտրուսային ճերմակաթևիկ, կոմստոկի որդան, կարտոֆիլի քաղցկեղ, պտղատու ծառերի բակտերիալ այրվածք, կարտոֆիլի ոսկեփայլ նեմատոդա, սողացող դառնախոտ, լայն տարածված վնասակար օրգանիզմների բաժնում՝ կոլորադյան բզեզ և գաղձեր (հավելված 6) տեսակները, իսկ ՀՀ տարածքում բացակայող վնասակար օբյեկտների բաժնում՝ 81 տեսակի վնասատուներ, հիվանդություններ և մոլախոտեր:

Վերջին տարիներին բուսասանիտարիայի նկատմամբ ուշադրությունն ուժեղացվել է: 2006թ. Հայաստանը միացավ Բույսերի կարանտինի և բույսերի պաշտպանության միջազգային համաձայնագրին (ԲԿԲՊՄՀ), (էլ. հավելված հայ. և ռուս.), և այդ նույն տարում էլ ՀՀ Ազգային ժողովը հաստատեց «Բույսերի կարանտինի և պաշտպանության» մասին նոր օրենքը, որի հիմնական դրույթները համապատասխանում են միջազգային պահանջներին: Նախապատրաստվեցին Հայաստանի՝ Բույսերի կարանտինի և բույսերի պաշտպանության եվրոպական և միջերկրածովյան կազմակերպության (ԲԿԲՊԵԿ) անդամ դառնալու համար անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը:

2007թ. Երևանում անցկացվեց բույսերի կարանտինի ԱՊՀ անդամ-երկրների համակարգող խորհրդի 14-րդ գիտաժողովը՝ համատեղելով բույսերի կարանտինի և բույսերի պաշտպանության եվրոպական և միջերկրածովյան կազմակերպության սեմինարի հետ, որը նախատեսված էր արևելաեվրոպական և ռուսախոս երկրների համար: Գիտաժողովին մասնակցում էին բույսերի կարանտինի և բույսերի պաշտպանության ազգային կազմակերպությունները: Հյուրերը ծանոթացան ՀՀ բույսերի կարանտինի և հողագործության պետական ծառայության գործունեության հետ, փոխանակվեց յուրա-

քանչյուր երկրի փորձի հետ կապված տեղեկատվություն:

2007-2008թթ. ժամանակաշրջանում մշակվել և հաստատվել են բուսասանիտարական նոր հավաստագրերը, որոնք համապատասխանացվել են միջազգային չափորոշիչներին, լրացումներ և փոփոխություններ են կատարվեցին «Բույսերի պաշպանության և կարանտինի մասին» ՀՀ օրենքում:

Բուսասանիտարական համակարգի կատարելագործումը և միջազգային պահանջներին համապատասխանեցումը նպաստեցին բուսասանիտարական հսկողության հուսալիության բարձրացմանը, առևտրային գործընկերների թվի ավելացմանը, բուսական բեռի արտահանման և ներմուծման ծավալների ընդլայնմանը:

Բուսասանիտարական օրենսդրության կատարելագործումը՝ Առևտրի համաշխարհային կազմակերպության, միջազգային չափորոշիչների և ԲԿԲՊՄՅ դրույթների պահանջներին համապատասխան, գտնվում է ՀՀ գյուղատնտեսության նախարարության հսկողության տակ:

Զգալի օգնություն են ցուցաբերում միջազգային կազմակերպությունները: ԲԿԲՊԵԿ-ի գիտական խորհրդական դոկտոր Ա.Դ. Օռլինսկու անմիջական մասնակցությամբ՝ կազմակերպվել են դասընթացներ բուսասանիտարական ռիսկի և միջազգային համաձայնագրերի վերաբերյալ:

Տեխնիկական աջակցության ծրագրերի իրականացման ընթացքում, միջազգայն փորձագետ Լ.Ի. Նեչանվայի (Լիտվա) անմիջական մասնակցությամբ, համաձայն միջազգային չափորոշիչների՝ մշակվեց իրավական ակտերի 12 նախագիծ՝ անցկացվեց 9 սեմինար, որոնք նվիրված էին բուսասանիտարիայի ոլորտի տարբեր հարցերի, մասնավորապես՝ պարզաբանում էին 2000/29 եվրոպական հրահանգի միջազգային դրույթների հիմնական չափանիշները: Հայերեն լեզվով թարգմանվեցին բուսասանիտարական միջոցառումների 22 միջազգային չափանիշներ, որոնք ոչ միայն զգալիորեն հեշտացրեցին նոր օրենսդրական փաստաթղթերի մշակման գործընթացը, այլև նպաստեցին կազմակերպչական այնպիսի հարցերի լուծմանը, ինչպիսիք են, օրինակ, տարածքի հետազոտության անցկա-

ցումը, բուսասանիտարական գրանցման կազմակերպումը և այլն: 2006թ. նոյեմբերի 27-ին ընդունված «Բույսերի կարանտինի և պաշտպանության» մասին օրենքում 2009թ. մայիսի 18-ին կատարվեցին փոփոխություններ, օրենքը վերանվանվեց «Բուսասանիտարիայի մասին», իսկ Բույսերի կարանտինի և հողագործության պետական տեսչությունը վերանվանվեց Բուսասանիտարիայի պետական տեսչություն:

Հայաստանի գյուղատնտեսության ոլորտի անվտանգությունն ապահովող ծառայությունների վերակազմակերպում

Համաձայն ՀՀ նախագահի հրամանագրի՝ ՀՀ կառավարության կողմից 2010 թվականի դեկտեմբերի 30-ին ընդունվել է ՀՀ ՊՍ «Սննդամթերքի անվտանգության պետական ծառայություն (ՍԱՊԾ)» (այսուհետ՝ Ծառայություն) պետական կառավարչական հիմնարկի ստեղծման մասին որոշումը, (էլ. հավելված հայ.): Ծառայությունը միաժամանակ հանդիսանում է լիազոր մարմին 3՝ սննդամթերքի անվտանգության և որակի հսկողության, անասնաբուժության և բուսասանիտարիայի ոլորտներում:

Ծառայությունը ՀՀ ՊՍ աշխատակազմի սննդամթերքի անվտանգության և անասնաբուժության պետական տեսչության և ՀՀ ՊՍ աշխատակազմի բուսասանիտարիայի պետական տեսչության իրավահաջորդն է:

Ծառայության նպատակներն ու խնդիրները

Ծառայության նպատակը սննդամթերքի անվտանգության, անասնաբուժության և բուսասանիտարիայի բնագավառների պետական կարգավորումն է, որը հիմնված է հետևյալ սկզբունքների վրա՝

- սննդի շղթայի (արտադրությունից մինչև սպառում) որպես մեկ միասնական ամբողջության դիտարկում՝ սննդամթերքի հնարավոր

վնասակար ազդեցությունից սպառողների առողջության պաշտպանության նպատակով («Ֆերմայից մինչև պատառաքաղ» կամ «դաշտից մինչև սեղան» սկզբունքը),

- սննդամթերքի արտադրության և շրջանառության կամ սննդի շղթայի փուլերում պետական վերահսկողության ապահովում՝ հետազոտելիության սկզբունքի կիրառմամբ,

- սննդամթերքի անվտանգության գիտականորեն հիմնավորված ռիսկերի գնահատման, խորհրդատվության տրամադրման, ռիսկերի կառավարման ընթացքում դրանց գիտականորեն հիմնավորված գնահատականների հիման վրա որոշումների ընդունում (ռիսկերի վերլուծության սկզբունքը),

- սննդամթերքի անվտանգության համակարգի գործունեության վերաբերյալ հանրությանը հստակ, ամբողջական և հավաստի տեղեկատվության տրամադրում (թափանցիկության և շահառուների ներգրավման սկզբունքը),

- սննդամթերքի անվտանգության ապահովման համար սննդի շղթայի բոլոր փուլերում գործառնություններ իրականացնող տնտեսավարող սուբյեկտների նկատմամբ (ներառյալ անասնակեր և առաջնային գյուղատնտեսական մթերք արտադրողները, վերամշակողները, իրացնողները) օրենքով սահմանված կարգով պատասխանատվության միջոցների կիրառում (տնտեսավարող սուբյեկտների պատասխանատվության սկզբունքը),

- սպառողների առողջությանը սպառնացող վտանգի հավանականության առկայության դեպքում, երբ վտանգի լիարժեք գնահատման համար գիտական հիմքերը բավարար չեն կամ անորոշ են, ռիսկերի կառավարման նախազգուշական միջոցների կիրառում (նախազգուշացման սկզբունքը):

Ծառայությունն իր նպատակների և խնդիրների լուծման համար, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով, իրականացնում է հետևյալ գործառնությունները՝

- սննդամթերքի, սննդամթերքի հետ շփվող նյութերի և սննդային հավելումների, կենդանական ծագման հումքի, կերերի, լրացակերերի, կերային խառնուրդների և կերային հավելումների, բույսերի,

բուսական արտադրանքի և կարգավորվող առարկաների համար նորմատիվ փաստաթղթերով սահմանված պահանջների համապատասխանության նկատմամբ վերահսկողություն,

- սննդամթերքի անվտանգության, բուսասանիտարիայի և անասնաբուժության բնագավառներում ծրագրերի մշակում և իրականացում, միջազգային համապատասխան կառույցների հետ համագործակցություն,

- ներմուծվող, տարանցիկ փոխադրվող բույսերի, բուսական արտադրանքի և կարգավորվող առարկաների՝ արտահանող երկրի կողմից տրված բուսասանիտարական փաստաթղթերի համապատասխանության նկատմամբ վերահսկողություն,

- իր լիազորությունների սահմաններում բույսերի պաշտպանության միջոցների և պարարտանյութերի ներմուծման, արտահանման, պահպանման, փոխադրման, իրացման, օգտագործման գործընթացների, ինչպես նաև բուսասանիտարական կանոնների և նորմերի պահանջների կատարման նկատմամբ վերահսկողություն,

- Հայաստանի Հանրապետության տարածքում բույսերի վնասակար օրգանիզմներ հայտնաբերելու և դրանց հետագա տարածումը կանխարգելելու նպատակով՝ մոնիթորինգի պարբերական անցկացում, բուսասանիտարական ռիսկերի վերլուծություն, այլ ծառայությունների կողմից կատարվող վնասակար օրգանիզմների մոնիթորինգի անցկացման նկատմամբ վերահսկողություն, արդյունքների հիման վրա կարանտին վնասակար օրգանիզմներից ազատ (զերծ) գոտիների, սահմանների որոշում,

- գյուղատնտեսական, զեղազարդային մշակաբույսերի և անտառի բուսասանիտարական վիճակի վերլուծություն, անհրաժեշտության դեպքում՝ պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններին, ինչպես նաև ֆիզիկական և իրավաբանական անձանց վնասակար օրգանիզմների հայտնաբերման, կանխարգելման, տարածման, դրանց դեմ պայքարի համալիր միջոցառումների կիրառման մասին իրազեկում,

- բուսասանիտարական ռիսկի վերլուծության հիման վրա Հայաստանի Հանրապետության տարածքում բացակայող կամ սահմա-

նափակ տարածում ունեցող կարանտին և կարգավորվող ոչ կարանտին վնասակար օրգանիզմների ցանկի հաստատում,

- Հայաստանի Հանրապետությունում պետական գրանցում չստացած, օգտագործումից հանված, ժամկետանց և արգելված, բնակչության առողջության և շրջակա միջավայրի համար վտանգավոր բույսերի պաշտպանության միջոցների ներմուծման, իրացման, օգտագործման բացառում, ագրարային կանոնների խախտմամբ կատարվող պայքարի աշխատանքների հսկողություն,

- իրավաբանական և ֆիզիկական անձանց հողային, արտադրական, առևտրային, պահեստային տարածքներում և կարգավորվող առարկաներում բույսերի պաշտպանությանն ուղղված միջոցառումների անցկացման նկատմամբ վերահսկողություն,

- ֆիզիկական և իրավաբանական անձանց բույսերի, բուսական արտադրանքի, կարգավորվող առարկաների, բույսերի պաշտպանության միջոցների և պարարտանյութերի ներմուծման թույլտվության և բույսերի, բուսական արտադրանքի ու կարգավորվող առարկաների ներմուծման, արտահանման, վերարտահանման բուսասանիտարական հավաստագրերի տրամադրում,

- հողերի մշակության, բույսերի և բուսական արտադրանքի արտադրության, ներմուծման, փոխադրման, պահպանման, իրացման, օգտագործման գործընթացներում բուսասանիտարական ստուգման և վնասակար օրգանիզմների դեմ տարվող պայքարի միջոցառումների անցկացման նկատմամբ վերահսկողություն,

- ներմուծվող բեռներում հայտնաբերված կարանտին վնասակար օրգանիզմների մասին արտահանող երկրի բուսասանիտարիայի բնագավառի պետական մարմնին, բույսերի պաշտպանության եվրոպական և միջերկրածովյան կազմակերպությանը և Հայաստանի Հանրապետության բոլոր սահմանային հսկիչ կետերին ծանուցում,

- բուսական արտադրանք և կարգավորվող առարկաներ արտադրող, իրացնող, փոխադրող, ներմուծող և արտահանող ֆիզիկական և իրավաբանական անձանց պետական բուսասանիտարական հաշվառում (ռեգիստր), վնասակար օրգանիզմների հայտ-

նաբերման տեղեկատվական համակարգերի մուտքագրում և պահպանում (տվյալների բազա),

- բույսերի պաշտպանության և կարանտինի միջոցառումների նկատմամբ վերահսկողություն, մոնիթորինգի իրականացման և բուսասանիտարական իրավիճակի գնահատման արդյունքում՝ վնասատուների դեմ պայքարի միջոցառումների պլանավորում,

- պետիցիդների մնացորդային քանակի նկատմամբ վերահսկողություն:

Հայաստանի բույսերի կարանտինի և բույսերի պաշտպանության ազգային կազմակերպությունը (ԲԿԲՊԱԿ) առաջնորդվում է՝

- Բույսերի կարանտինի և բույսերի պաշտպանության միջազգային համաձայնագրով (ԲԿԲՊՄՅ), (էլ. հավելված հայ. և ռուս.),

- Առևտրի համաշխարհային կազմակերպության (ԱՀԿ) սանիտարիայի և բուսասանիտարիայի մասին համաձայնագրով (էլ. հավելված հայ. և ռուս.),

- Բուսասանիտարիայի բնագավառի միջազգային չափորոշիչներով (ԲՄՄՉ), (էլեկ.հավելված հայեր.և ռուսեր),

-բուսասանիտարիայի բնագավառում միջազգային միջկառավարական պայմանագրերով,

- Եվրասիական տնտեսական միության 2014թ. մայիսի 29-ին ընդունված պայմանագրով և որոշումներով,

- ԱՊՀ անդամ-պետությունների բույսերի կարանտինի համակարգման խորհրդի որոշումներով,

- «Բուսասանիտարիայի մասին» և «Սննդամթերքի անվտանգության պետական վերահսկողության մասին» ՀՀ օրենքներով (էլ. հավելված հայ.),

- ՀՀ կառավարության որոշումներով,

- ՀՀ ԳԼ սննդամթերքի անվտանգության պետական ծառայության կանոնադրությամբ և հրամաններով (էլ. հավելված հայ. և ռուս.);

ԲԿԲՊԱԿ-ն, ծառայության գործառույթները պատշաճ կատարելու նպատակով, իրականացրել է հետևյալ քայլերը՝

Բուսասանիտարական հաշվառում

Համաձայն «Բուսասանիտարիայի մասին» ՀՀ օրենքի 13 և 14-րդ հոդվածների, ՀՀ վարչապետի 2010 թվականի նոյեմբերի 3-ի N925-Ա որոշման, ինչպես նաև Ծառայության կանոնադրության 9.13 կետի և ԵՄ խորհրդի 2000/29, 92/90, 93/50 դիրեկտիվների՝ ստեղծվել է բույսեր և բուսական արտադրանք արտադրողների, ներմուծողների, արտահանողների և այլ տեսակի գործունեություն իրականացնող սուբյեկտների պետական բուսասանիտարական հաշվառման և բուսասանիտարական անձնագրերի տրամադրման կարգը:

Հաշվառման և բուսասանիտարական անձնագրի ներդրման նպատակն է եղել ստանալ, հավաքագրել, մշակել, համակարգել, թարմացնել և պահպանել հաշվառված օբյեկտների մասին տվյալները և դրանք օգտագործել բուսավերահսկման և բույսերի ու բուսական արտադրանքի առևտրի ժամանակ:

Հանրապետությունում հաշվառման պրոցեսը սկսվել է 01.01.2012թ-ից: Առ այսօր հաշվառվել է մոտ 800 տնտեսավարող սուբյեկտ:

Տարածքի հետազոտում (մոնիթորինգ)

Կազմվել է նպատակային մոնիթորինգի տարեկան պլանը: Համաձայն ժամանակացույցի՝ առաջին հերթին հետազոտվում են՝ սերմանյութի և տնկանյութի արտադրությամբ զբաղվող հաշվառված օբյեկտների տարածքները, բոլոր ջերմատները, հաշվառվող արտադրողները, որոնք արտադրում են բույսեր և բուսական արտադրանք՝ արտերկիր արտահանելու նպատակով:

Ազգային հետազոտության հիմնական նպատակն է՝

- ա) պարզել տարածքի բուսասանիտարական վիճակը,
- բ) ժամանակին հայտնաբերել կարանտին օրգանիզմների օջախները՝ դրանց տեղայնացման և ոչնչացման նպատակով,
- գ) սահմանել կարանտին օրգանիզմներից ազատ գոտիները, դրանցից զերծ արտադրավայրերը և արտադրական տեղամասերը,

դ) հիմնավորել միջազգային առևտրի ժամանակ ներկայացվող բուսասանիտարական պահանջները:

Բուսասանիտարիայի բնագավառի ազգային ուղեցույցները, ընթացակարգերը, ներմուծման ժամանակ կարանտին վնասակար օրգանիզմների հայտնաբերման և դրանց հետագա տարածումը կանխարգելու կանոնները

(էլ. հավելված հայ. ՍԱՊԾ հրամաններ),

- Սննդամթերքի անվտանգության պետական ծառայության պետի 2011 թվականի սեպտեմբերի 14-ի «Բուսասանիտարական հաշվառման, վերահաշվառման, հաշվառման կասեցման կարգը, հաշվառման հայտի, հաշվառման վկայականի և գրանցամատյանի ձևերը հաստատելու մասին» N 29-Ն հրաման

- Սննդամթերքի անվտանգության պետական ծառայության պետի 2011 թվականի սեպտեմբերի 9-ի «Բուսասանիտարական անձնագրի ձևը հաստատելու մասին» N 30-Ն հրաման

- Սննդամթերքի անվտանգության պետական ծառայության պետի 2012 թվականի հունիսի 7-ի «Հայաստանի Հանրապետության տարածքում կարանտին վնասակար օրգանիզմներից զերծ գոտիների սահմանման ուղեցույցը հաստատելու մասին» N 86-Ա հրաման (ԲՄՄԶ4)

- Սննդամթերքի անվտանգության պետական ծառայության պետի 2012 թվականի հունիսի 29-ի «ՀՀ ԳՆ ՍԱՊԾ-ի բուսասանիտարիայի գծով մասնագետ-տեսուչների համար հսկողության ու մոնիթորինգի տարեկան պլան-ժամանակացույցը հաստատելու մասին» N 108-Ա հրաման

- Սննդամթերքի անվտանգության պետական ծառայության պետի 2012 թվականի հուլիսի 23-ի «Բույսերի կարանտին վնասակար օրգանիզմներից զերծ արտադրավայրեր և արտադրական տեղամասերի համար անհրաժեշտ պայմանները հաստատելու մասին» N 133-Ա հրաման (ԲՄՄԶ10)

- Սննդամթերքի անվտանգության պետական ծառայության պետի

2012 թվականի հուլիսի 25-ի «Վնասակար օրգանիզմների ռիսկերի վերլուծության ընթացակարգ հաստատելու մասին» N 154-Ա հրաման (ՏՉ 5/3/5)

- Սննդամթերքի անվտանգության պետական ծառայության պետի 2012 թվականի օգոստոսի 28-ի «Կարանտին վնասակար օրգանիզմների բուսասանիտարական ռիսկերի վերլուծության ուղեցույցը հաստատելու մասին» N 206-Ա հրաման, հավելված 1 (ԲՄՄՉ 2 և 11)

- Սննդամթերքի անվտանգության պետական ծառայության պետի 2012 թվականի օգոստոսի 28-ի «Բուսասանիտարական հսկողության մշտադիտարկման /մոնիթորինգ/ ուղեցույցը հաստատելու մասին» N 206-Ա հրաման, հավելված 2

- Սննդամթերքի անվտանգության պետական ծառայության պետի 2012 թվականի հոկտեմբերի 18-ի «Կարտոֆիլի քաղցկեղի ներթափանցումը և տարածումը կանխարգելող միջոցառումների իրականացման ուղեցույցը հաստատելու մասին» N 408-Ա հրաման

- Սննդամթերքի անվտանգության պետական ծառայության պետի 2012 թվականի հոկտեմբերի 30-ի «Միջազգային առևտրում փայտե փաթեթավորման նյութի կարգավորման ուղեցույցը հաստատելու մասին» N 446-Ա հրաման

- Սննդամթերքի անվտանգության պետական ծառայության պետի 2013 թվականի փետրվարի 8-ի «Հայաստանի Հանրապետություն կարտոֆիլի օղափտման ներթափանցումը և տարածումը կանխարգելող միջոցառումների իրականացման ուղեցույցը հաստատելու մասին» N 41-Ա հրաման

- Սննդամթերքի անվտանգության պետական ծառայության պետի 2013 թվականի մարտի 26-ի «Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծվող բույսերի, բուսական արտադրանքի կամ կարգավորվող առարկաների բուսասանիտարական պահանջների անհամապատասխանության դեպքում արգելքի ծանուցման օրինակելի ձևի ընթացակարգը հաստատելու մասին» N 145-Ն հրաման

- Սննդամթերքի անվտանգության պետական ծառայության պետի 2013 թվականի ապրիլի 26-ի «Հայաստանի Հանրապետության տարածք կարտոֆիլի պալարի իլիկածն վիրոհի հիվանդության տեր

բույսերի ներմուծման և տարածման դեմ պայքարի հատուկ պահանջները հաստատելու մասին» N 243-Ա հրաման

- Սննդամթերքի անվտանգության պետական ծառայության պետի 2013 թվականի ապրիլի 26-ի «Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծվող բույսերի, բուսական արտադրանքի կամ կարգավորվող առարկաների բուսասանիտարական պահանջների անհամապատասխանության դեպքում արգելքի ծանուցման ընթացակարգը հաստատելու մասին» N 244-Ա հրաման

- Սննդամթերքի անվտանգության պետական ծառայության պետի 2013 թվականի մայիսի 13-ի «Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծվող բույսերի, բուսական արտադրանքի և կարգավորվող այլ առարկաների բուսասանիտարական ստուգումների հաճախականությունը նվազեցնելու ընթացակարգը հաստատելու մասին» N 263-Ա հրաման

- Սննդամթերքի անվտանգության պետական ծառայության պետի 2013 թվականի ապրիլի 11-ի «Հայաստանի Հանրապետության տարածք կարտոֆիլի նենատողի ներթափանցումը և տարածումը կանխարգելող միջոցառումների իրականացման ուղեցույցը հաստատելու մասին» N 174-Ա հրաման

- Սննդամթերքի անվտանգության պետական ծառայության պետի 2013 թվականի մայիսի 8-ի «Հայաստանի Հանրապետության տարածքում վնասակար օրգանիզմների առկայության, բացակայության և վաղանցիկության որոշման մասին ուղեցույց» հաստատելու մասին (ԲՄՄՉ8 (ԲՄՄՉ 8.) N257-Ա հրաման

- Սննդամթերքի անվտանգության պետական ծառայության պետի 2013 թվականի մայիսի 21-ի «Ցիտրուսային մշակաբույսերի քսանտոմոնաս կամպեստրիս, ցերկոսպորա անգուլենսիս քերի իթ մենդիս և գուլգանադիա ցիտրիկարպա կիլի կարանտին օրգանիզմներից զերծ գոտի ճանաչված երկրների ցանկը հաստատելու մասին» N 294-Ա հրաման

- Սննդամթերքի անվտանգության պետական ծառայության պետի 2013 թվականի մայիսի 15-ի «Բույսերի վնասակար օրգանիզմներից զերծ գոտիների եվրամիության անդամ երկրների ցանկը հաստա-

տելու մասին» N 265-Ա հրաման

- Սննդամթերքի անվտանգության պետական ծառայության պետի 013 թվականի մայիսի 8-ի «Հայաստանի Հանրապետության տարացքում վնասակար օրգանիզմների առկայության, բացակայության և վաղանցիկության որոշման ուղեցույցը հաստատելու մասին» N 257-Ա հրաման

- Սննդամթերքի անվտանգության պետական ծառայության պետի 2013 թվականի մայիսի 29 –ի «Հայաստանի Հանրապետություն Բրազիլիայի ֆեդերատիվ հանրապետությունից ներմուծվող ցիտրուսային մրգերի հատուկ պահանջները հաստատելու մասին» N 302 -Ա հրաման

- Սննդամթերքի անվտանգության պետական ծառայության պետի 2013 թվականի հունիսի 26-ի «Վնասակար օրգանիզմների ոչնչացման ընթացակարգի ուղեցույցը հաստատելու մասին» (ԲՄՍԶ 9) N375-Ա հրաման

- Սննդամթերքի անվտանգության պետական ծառայության պետի 2013 թվականի հուլիսի 19-ի «Բույսերի կարանտին և կարգավորվող ոչ կարանտին վնասակար օրգանիզմների ցանկ հաստատելու մասին» N 426-Ն հրաման

- Սննդամթերքի անվտանգության պետական ծառայության պետի 2013 թվականի նոյեմբերի 22-ի «Հայաստանի Հանրապետությունում բուսասանիտարական կարանտին հսկողության (վերահսկողության) ենթակա արտադրանքի ցանկը հաստատելու մասին» N 700-Ն հրաման

- Սննդամթերքի անվտանգության պետական ծառայության պետի 2013 թվականի մայիսի 16-ի «Հայաստանի Հանրապետությունում Արմավենու տրիպսիներ թափանցման, տարածման և կանխարգելման միջոցառումները հաստատելու մասին» N 273 – Ա հրաման (ԵԴ2003/766)

- Սննդամթերքի անվտանգության պետական ծառայության պետի 2013 թվականի մայիսի 16-ի «Հայաստանի Հանրապետությունում Զինական երկարաբեղիկի ներթափանցման, տարածման և կանխարգելման միջոցառումները հաստատելու մասին» N 272 – Ա հրա-

ման (ԵԴ2002/360)

- Սննդամթերքի անվտանգության պետական ծառայության պետի 2013 թվականի մայիսի 17-ի «Եգիպտացորենի արևմտյան բզեզի ներթափանցման, տարածման կանխարգելման և դրա դեմ պայքարի միջոցառումները հաստատելու մասին» N 285-Ա հրաման (ԵԴ2003/766)

- Սննդամթերքի անվտանգության պետական ծառայության պետի 2013 թվականի մայիսի 18-ի «Հայաստանի Հանրապետություն պտղատու մշակաբույսերի բակտերիալ այրվածք հիվանդության ներթափանցման, տարածման, կանխարգելման և պայքարի միջոցառումները հաստատելու մասին» N 288-Ա հրաման (ԵԴ91-261{1})

- Սննդամթերքի անվտանգության պետական ծառայության պետի 2013 թվականի մայիսի 20-ի «Արմավենու կարմիր երկարակնճիթ բզեզի ներթափանցման, տարածման կանխարգելման և դրա դեմ պայքարի միջոցառումները հաստատելու մասին» N 290-Ա հրաման (ԵԴ2007/365)

- Սննդամթերքի անվտանգության պետական ծառայության պետի 2014 թվականի փետրվարի 26–ի «Բույսերի կարգավորվող վնասակար օրգանիզմների անվանացանկը վարելու ուղեցույցը հաստատելու մասին» N 59-Ա հրաման

- Սննդամթերքի անվտանգության պետական ծառայության պետի 2015 թվականի մարտի 13-ի «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Աղավնատան, Այգեկի, Արևադաշտի, Նորապատի և Նորակերտի գյուղական համայնքներում բույսերի պաշտպանության միջոցառումների ցանկն ու իրականացման տարածքների քարտեզները հաստատելու մասին» N 261-Ա հրաման

- Սննդամթերքի անվտանգության պետական ծառայության պետի 2015 թվականի դեկտեմբերի 18-ի «Պեստիցիդների արտադրության, պահպանման և իրացման մասին եզրակացության ձևը հաստատելու մասին» N 1124-Ն հրաման

- Սննդամթերքի անվտանգության պետական ծառայության պետի 2016 թվականի ապրիլի 21 «Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության

պետական ծառայության պետի 2011 թվականի փետրվարի 25-ի N 02-Ն հրամանում լրացումներ կատարելու մասին» N 142 –Ն հրաման

Սեմինարներ

- Արտադրողների, ներմուծողների և այլ տեսակի գործունեություն իրականացնող անձանց հաշվառում, բույսերի անձնագրի համակարգի ստեղծում և Հայաստանում բուսասանիտարական անձնագրի տրամադրում` հիմնված է ՀՀ դիրեկտիվների և ԵՄ երկրների փորձի ու հաշվառման վերաբերյալ իրավական ակտերի վրա (տեսուչների, արտադրողների, ներմուծողների և այլ գործունեություն իրականացնողների համար),

- բուսասանիտարական վերահսկողություն` ուղղված, վնասակար օրգանիզմների հայտնաբերման նպատակով, վերահսկման համակարգի և մոնիթորինգի հետազոտմանը (տեսուչների համար),

- միջազգային առևտրում փայտի փաթեթավորման նյութերի կարգավորում – ԲՄՍԶ 15 (տեսուչների համար),- համընդհանուր բուսասանտարական վերահսկողություն - ԲՄՍԶ 4, 6, 8,

- «ԵԱՏՍ համագործակցության խնդիրները սննդամթերքի անվտանգության ոլորտում» համաժողովի անցկացում ՍԱՊԾ աշխատակիցների համար,

- Բույսերի պաշտպանության եվրոպական և միջերկրածովյան կազմակերպության կողմից բույսերի կարանտինի և բույսերի պաշտպանության գծով ԵՄ օժանդակությամբ ստեղծված վնասակար օրգանիզմների ռիսկի վերլուծության տեղեկատվության պահպանման համակարգչային ծրագրի տեղայնացում /CAPRA/, որը գործում է անգլերեն և ռուսերեն լեզուներով (թարգմանվել է նաև հայերեն): Ծրագիրը նախատեսված է բուսասանիտարական ռիսկերի վերլուծություն կատարող մասնագետների, ինչպես նաև արտակարգ իրավիճակներում և, օջախի հայտնաբերման դեպքում միջոցառումների առաջնահերթությունների սահմանման նպատակով, որոշումներ կայացնելու աշխատանքների համար: Ծառայության համապատասխան մասնագետների համար անցկացվել են դասըն-

թացներ ԱՄՆ ՄՁԳ «Ի-ՊԻ-ԷՄ-Սի» ծրագրի միջազգային բուսասանիտարական ժամանակավոր խորհրդատու, Բույսերի պաշտպանության եվրոպական և միջերկրածովյան կազմակերպության գիտական ղեկավար դոկտոր Ա. Օրլինսկու ղեկավարությամբ` CAPRA ծրագրով աշխատելու ուսուցանելու նպատակով:

Տեսուչների որակավորման բարձրացում և մեթոդական ձեռնարկների կազմում

«Բուսասանիտարական համակարգի բարելավման և մասնագիտական գիտելիքների բարձրացման աջակցություն» ծրագրի շրջանակներում, ամեն տարի կազմակերպվում են 40-ժամյա դասընթացներ` բոլոր նյութերի համակարգված փուլային ուսումնասիրման նպատակով, որով առաջնորդվում է ԲԿԲՊԱԿ-ն:

Վերոնշյալ ծրագրի շրջանակներում, ԲԿԲՊԱԿ-ի մասնագետների և Ազգային ագրարային համալսարանի գիտնականների մասնակցությամբ, ամեն տարի կազմվում և հրատարակվում են կարանտին վնասակար օրգանիզմների հայտնաբերման մեթոդական ուղեցույցեր (սկսած 2012թ-ից):

Մեր մասնագետները պարբերաբար մասնակցում են ՊԳԿ-ի և ԲԿԲՊԵԿ-ի կողմից արտերկրում կազմակերպվող սեմինարներին և ստանում համապատասխան որակավորում:

Հրատարակությունները և կապը ՁԼՄ-ների հետ

Ծառայության բուսասանիտարիայի բնագավառի մասնագետների կողմից մշակվել և հրատարակվել է`

- տարածաշրջանում նախատիպը չունեցող բուսասանիտարական քառալեզու (անգլերեն, ֆրանսերեն, ռուսերեն և հայերեն) բառարան («Ֆլորա և Ֆաունա» ՄՊԸ-ի ֆինանսական աջակցությամբ, սահմանափակ քանակությամբ)

- բուսասանիտարիայի ոլորտը կարգավորող միջազգային և Հայաստանի Հանրապետության իրավական ակտերի ձեռնարկ,

- ՀՀ-ում օգտագործման համար թույլատրված բույսերի պաշտպանության քիմիական և կենսաբանական միջոցների տեղեկատու.

- ՀՀ-ում առկա և ակնկալվող կարանտին վնասակար օրգանիզմների և թունավոր մոլախոտային բույսերի մասին ձեռնարկ,

- բույսերի անվանումների հայերեն-ռուսերեն-լատիներեն և բուսասանիտարական տերմինների բառարան,

- խաղողի ֆիլոքսերայի մոնիտորինգի, նույնականացման և պայքարի ուղեցույց.

- «Կարտոֆիլի ցեց և լուլիկի հարաֆամերիկյան ցեց» պրակտիկ ուղեցույց:

Ծառայությունը պարբերաբար համագործակցում և տպագրության նպատակով հոդվածներ է ներկայացնում ինչպես հանրապետությունում գործող գիտական ամսագրերում և պարբերականներում, այնպես էլ Ռուսաստանի Դաշնությունում տպագրվող՝ «Բույսերի կարանտին գիտություն և պրակտիկա», «Բույսերի պաշտպանության և բույսերի կարանտին» գիտական ամսագրերում:

Հասկացուցություններ

Լիազոր մարմին (մարմիններ)՝ բուսասանիտարիայի բնագավառում քաղաքականություն մշակող, վերահսկողություն իրականացնող և (կամ) ծառայություններ մատուցող Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական մարմին (մարմիններ),.

- **բույսեր**՝ բույսերն ամբողջությամբ և բույսերի առանձին մասերը, այդ թվում՝ սերմերը, սաղմը,

- **բուսասանիտարիա (ֆp.fito+sanitaire=«santn des plantes»)**՝ շրջակա միջավայրի առողջացմանը և բուսերի ու բուսական արտադրանքի մեջ վնասակար օրգանիզմների ներթափանցման ռիսկերից պաշտպանությանն ուղղված գիտականորեն հիմնավորված միջոցառումների գործնական կիրառման, առողջ միջավայրում առողջ բույսերի, բուսական արտադրանքի և կարգավորվող առարկաների արտադրությանը նպատակաուղղված միջոցառումների հա-

մակարգ,

- **բուսասանիտարական վիճակ**՝ բույսերի հիվանդությունների տարածմամբ, բույսերի վնասատուների թվաքանակով և մոլախոտերի առկայությամբ պայմանավորված հողերի, անտառների և **բուսականության վիճակ**,

- **բուսասանիտարական բարելավում**՝ մարդու, կենդանիների և բույսերի կենսագործունեության համար շրջակա միջավայրի պաշտպանվածության այնպիսի վիճակ, երբ բացակայում են կարանտին վնասակար օրգանիզմները և՝ երբ ոչ կարանտին վնասակար օրգանիզմների թվաքանակը գտնվում է վնասակարության խտության շեմից կամ շեմային զարգացումից ցածր,

- **տարածքի բուսասանիտարական բարելավում**՝ տարածքի իրավիճակ, որտեղ ապահովվում է բուսաբուծության և անտառային տնտեսության կայուն գործունեություն, կանխվում է վնասակար օրգանիզմների բազմացումն ու տարածումը, իրավիճակ, որը նպաստում է էկոլոգիապես քիչ վտանգավոր ու որակյալ բուսական բնույթի արտադրանքի ստացմանը,

- **բուսասանիտարական պահանջներ**՝ նորմատիվ իրավական փաստաթղթերում զետեղված պարտադիր կատարման կանոններ,

- **բույսերի կարանտին**՝ բույսերի պաշտպանության պետական միջոցառումների համալիր, որի նպատակն է բացահայտել, մեկուսացնել և վերացնել բույսերի, բուսական արտադրանքի և կարգավորվող առարկաների համար կարանտին վնասակար օրգանիզմներով վարակված օջախները,

- **բուսական արտադրանք**՝ բուսական ծագման չվերամշակված նյութ, ինչպես նաև վերամշակված մթերքներ (բացառությամբ ջերմամշակում անցածների), որոնք իրենց բնույթով կամ վերամշակման եղանակով կարող են ստեղծել վնասակար օրգանիզմների ներթափանցման և (կամ) տարածման վտանգ,

- **բուսասանիտարական ռիսկի վերլուծություն**՝ կենսաբանական և տնտեսական տվյալների գնահատում՝ վնասակար օրգանիզմների կարգավորման անհրաժեշտությունը որոշելու, դրանց դեմ պայքարի բուսասանիտարական միջոցառումներ իրականացնելու

կամ բուսասանիտարական միջոցառումներն ուժեղացնելու նպատակով,

- **բուսասանիտարական կանոններ և նորմեր**՝ միջազգային պայմանագրերով, Հայաստանի Հանրապետության օրենքներով և այլ նորմատիվ իրավական ակտերով սահմանված բուսասանիտարական պահանջներ,

- **բույսերի պաշտպանություն**՝ բույսերի, բուսական արտադրանքի աճեցման, փորձարկման, պահպանման և փոխադրման վայրերում վնասակար օրգանիզմների դեմ քիմիական և կենսաբանական պայքարի միջոցների օգտագործում, ինչպես նաև շրջակա միջավայրի պահպանության, բույսերի և կենդանիների պաշտպանությանն ուղղված վնասակար օրգանիզմների դեմ պայքարի միջոցառումների համալիր,

- **բուսասանիտարական զննում**՝ բույսերի, բուսական արտադրանքի և կարգավորվող առարկաների ակնադիտական հետազոտություն՝ վնասակար օրգանիզմների առկայությունը կամ բացակայությունը պարզելու նպատակով,

- **բույսերի կարանտին վնասակար օրգանիզմ**՝ վտանգի ենթարկված գոտու համար տնտեսական նշանակություն ունեցող վնասակար օրգանիզմ, որը տվյալ գոտում դեռևս բացակայում է կամ առկա է սահմանափակ չափով, հանդիսանում է պայքարի օբյեկտ և պաշտոնապես հսկվում է,

- **բույսերի վնասակար օրգանիզմ**՝ բույսերի, բուսական արտադրանքի համար հիվանդությունների, վնասատուների և մոլախտերի ցանկացած տեսակ,

- **բույսերի կարանտին գոտի**՝ տարածք, որտեղ գոյություն ունի կարանտին վնասակար օրգանիզմ, որի հետագա տարածումը կանխարգելելու և վերացնելու նպատակով սահմանվել է կարանտին հսկողություն և անցկացվում են բուսասանիտարական միջոցառումներ,

- **բույսերի կարգավորվող ոչ կարանտին վնասակար օրգանիզմ**՝ վնասակար օրգանիզմ, որի առկայությունը տնտեսական վնաս է հասցնում բույսերի նպատակային օգտագործմանը և հսկ-

վում ներմուծող երկրի կողմից,

- **բույսերի վնասակար օրգանիզմների դեմ պայքար**՝ կարանտին վնասակար օրգանիզմների սերնդատվության ճնշման, մեկուսացման և (կամ) վերացման, ինչպես նաև կարգավորվող ոչ կարանտին վնասակար օրգանիզմների կառավարման նպատակով՝ բուսասանիտարական կանոնների պարտադիր կիրառում,

- **կարգավորվող առարկա (կարանտին օբյեկտ)**՝ ցանկացած բույս, բուսական արտադրանք, պահեստային տարածք, փաթեթավորման նյութ, տրանսպորտային միջոց, բեռնարկղ, հող և ցանկացած այլ օբյեկտ կամ նյութ, որը կարող է պարունակել կամ տարածել բույսերի վնասակար օրգանիզմ և որի նկատմամբ անհրաժեշտ է կիրառել բուսասանիտարական միջոցառումներ,

- **բուսասանիտարական փորձաքննություն**՝ բույսերի, բուսական արտադրանքի և կարգավորվող այլ առարկաների լաբորատոր հետազոտություն՝ վնասակար օրգանիզմի առկայությունը կամ բացակայությունը հայտնաբերելու նպատակով,

- **բուսասանիտարական հաշվառում՝ բուսասանիտարիայի** ոլորտում գործունեություն իրականացնող ֆիզիկական և իրավաբանական անձանց վերաբերյալ տվյալների հավաքում, դասակարգում, պահպանում, թարմացում և օգտագործում,

- **բուսասանիտարական հաշվառման վկայական**՝ բուսասանիտարական հաշվառման արդյունքում ֆիզիկական և իրավաբանական անձանց տրվող փաստաթուղթ,

- **բուսասանիտարական միջոցառում**՝ պաշտոնական գործընթաց՝ ուղղված կարանտին վնասակար օրգանիզմի ներթափանցման և (կամ) տարածման կամ կարգավորվող ոչ կարանտին վնասակար օրգանիզմից սպասվող տնտեսական վնասի սահմանափակմանը,

- **բուսասանիտարական անձնագիր**՝ Հայաստանի Հանրապետությունում արտադրված բույսերը, բուսական արտադրանքը, կարգավորվող առարկաներն ուղեկցող փաստաթուղթ, որը հավաստում է դրանց ստուգված և կարանտին վնասակար օրգանիզմից զերծ լինելու մասին,

- **խմբաքանակ**՝ նույն նշանակության, միևնույն արտադրողի

կողմից գործողության նույն սկզբունքով արտադրված (պատրաստված), նույն բաղադրությամբ և անվտանգությունը բնութագրող սահմանված նույն պահանջներին համապատասխանող բուսասանիտարական հսկողության ենթակա ապրանքի որոշակի քանակ, որն ուղեկցվում է ապրանքաուղեկից փաստաթղթով.

- **բուսասանիտարական ուսումնասիրություն**՝ պաշտոնական սահմանված ժամանակահատվածում անցկացված միջոցառում՝ վնասակար օրգանիզմի սերնդատվության բնութագրի կամ տվյալ գոտում վնասակար օրգանիզմների կազմի որոշման նպատակով.

- **բուսասանիտարական հսկողության ենթակա ապրանք՝ բույսեր**, բուսական արտադրանք, կարգավորվող առարկա,

- **ագրոքիմիկատներ**՝ պարարտանյութեր, քիմիական հողաբարելավիչներ, որոնք նախատեսված են բույսերի սնուցման, հողերի բերրիության բարելավման համար.

- **պեստիցիդ**՝ ցանկացած նյութ կամ նյութերի խառնուրդ, որը նախատեսված է որոշակի վնասատուների (ներառյալ մարդկանց և կենդանիների հիվանդություններ փոխանցողների, սննդամթերքի, գյուղատնտեսական արտադրանքի, փայտանյութի, կենդանիների կերերի արտադրության, վերանշակման, փոխադրման, իրացման գործընթացներին խանգարող և խոչընդոտող վնասատուների), բույսերի և սնկերի անցանկալի տեսակների կանխարգելման, ոչնչացման կամ պայքարի համար: Պեստիցիդների խմբում ներառված են միջատասպանները (ինսեկտիցիդներ), կրծողների դեմ պայքարի միջոցները (ռոտենդիցիդներ), սնկասպանները (ֆունգիցիդներ), մոլախոտերի դեմ պայքարի համար նախատեսված նյութերը (հերբիցիդներ), բույսերի աճի կարգավորիչները, ֆերոմոնները, դեֆոլիանտները, դեսիկանտները և ֆումիգանտները.

- **սերմանյութ (տնկանյութ)**՝ սորտի վերարտադրության նպատակով օգտագործվող բույս կամ դրա առանձին մաս,

- **պետական վերահսկողություն**՝ վերահսկող լիազոր մարմնի կողմից իրականացվող միջոցառում (գործողություն) կամ միջոցառումների (գործողությունների) համալիր, որը նպատակաուղղված է սննդամթերքի, սննդամթերքի հետ անմիջական շփման մեջ գտնվող

նյութերի, անասնաբուժական և բուսասանիտարական հսկման ենթակա ապրանքների, ինչպես նաև պեստիցիդների և ագրոքիմիկատների, սննդամթերքի անվտանգության, անասնաբուժության, բուսասանիտարիայի ոլորտները կարգավորող Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխանության ապահովմանը,

- **սահմանային պետական վերահսկողություն**՝ վերահսկող լիազոր մարմնի կողմից Հայաստանի Հանրապետության պետական սահմանով իրավաբանական և ֆիզիկական անձանց, անհատ ձեռնարկատերերի կողմից ներմուծվող և արտահանվող (վերաարտահանվող) սննդամթերքի, Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատած ցանկով սահմանված սննդամթերքի հետ անմիջական շփման մեջ գտնվող նյութերի և սննդային ու կենսաբանական ակտիվ հավելումների, անասնաբուժական և բուսասանիտարական հսկման ենթակա ապրանքների Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջներին (արտահանման և վերաարտահանման դեպքերում՝ նաև ներմուծման երկրի սահմանած պահանջներին) համապատասխանությունը պարզելու և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով դրանց ներմուծմանը, արտահանմանը և տարանցիկ փոխադրմանն ուղղված վերահսկողական միջոցառումների համալիր, իսկ անհամապատասխանության դեպքում՝ կանխելուն ուղղված վերահսկողական միջոցառումների համալիր,

- **ստուգում**՝ «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով և դեպքերում վերահսկող լիազոր մարմնի կողմից իրականացվող գործընթաց,

- **դիտարկում**՝ սահմանված կարգով՝ սննդամթերքի, սննդամթերքի հետ անմիջական շփման մեջ գտնվող նյութերի, սննդային և կենսաբանական ակտիվ հավելումների մակնշմանը և պիտանիության ժամկետին, կենդանական ծագման մթերքի պահման պայմաններին, ինչպես նաև պեստիցիդների և ագրոքիմիկատների բաղադրությանն ու մակնշմանը ներկայացվող պահանջներին համապա-

տասխանության ապահովման նպատակով իրականացվող գործողությունների համալիր,

- **բուսասանիտարական մշտադիտարկում (մոնիթորինգ)**՝ բույսերի, բուսական արտադրանքի և կարգավորվող առարկաների բուսասանիտարական զննում և (կամ) բուսասանիտարական փորձաքննություն՝ վնասակար օրգանիզմների առկայությունը կամ բացակայությունը որոշելու նպատակով,

- **պետական վերահսկողություն իրականացնող անձ (տեսուչ)**՝ սննդամթերքի անվտանգության, անասնաբուժության, բուսասանիտարիայի ոլորտները կարգավորող Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների պահպանման և կատարման նկատմամբ օրենքով սահմանված կարգով վերահսկողություն իրականացնելու լիազորություն ունեցող պաշտոնատար անձ,

- **տնտեսավարող սուբյեկտ**՝ անհատ ձեռնարկատեր կամ իրավաբանական անձ, որն իրականացնում է սննդամթերքի, սննդամթերքի հետ անմիջական շփման մեջ գտնվող նյութերի, անասնաբուժական և բուսասանիտարական հսկման ենթակա ապրանքների, ինչպես նաև պետիցիդների և ագրոքիմիկատների ներմուծման, արտահանման, վերաարտահանման, արտադրության և շրջանառության փուլերի հետ կապված գործունեություն,

- **տարանցիկ փոխադրվող ապրանք**՝ ապրանք, որը մաքսային հսկողության ներքո փոխադրվում է Հայաստանի Հանրապետության մաքսային տարածքով մուտքի մաքսային մարմնից ելքի մաքսային մարմին՝ ենթարկվելով մի շարք ընթացակարգերի, որոնք ապահովում են դրա ամբողջական, առանձնացված և փաթեթավորված պահպանությունը,

- **վերաարտահանվող ապրանք**՝ ապրանք, որը ներմուծվող երկրից հետագայում արտահանվում է: Ապրանքը կարող է պահպանվել, բաժանվել մասերի, խառնվել այլ ապրանքների հետ կամ վերափաթեթավորվել,

- **արտահանման կամ վերաարտահանման բուսասանիտարական հավաստագիր**՝ հավաստագիր, որը տրվում է բուսասանիտարական ստուգման արդյունքների հիման վրա և հավաստում է

բուսասանիտարական հսկման ենթակա ապրանքների համապատասխանությունը ներմուծող երկրի արտահանման և վերաարտահանման համար սահմանված բուսասանիտարական կանոնների պահանջներին,

- **կասեցում**՝ գործընթաց, որի միջոցով սահմանափակվում է սննդամթերքի, սննդամթերքի հետ անմիջական շփման մեջ գտնվող նյութերի արտադրությունը, վերամշակումը, շուկայահանումը,

- **ռիսկ**՝ մարդու կյանքին և առողջությանը սպառնացող վտանգի առաջացման հավանականություն և այդ վտանգի ազդեցության աստիճան,

- **ռիսկի վերլուծություն**՝ ռիսկի գնահատման, ռիսկի կառավարման և ռիսկի մասին տեղեկատվության փոխանակման երեք առանձին փոխկապակցված փուլերից կազմված գործընթաց,

- **ռիսկի գնահատում**՝ գիտական կազմակերպությունների (կենտրոնների) կողմից իրականացվող գիտականորեն հիմնավորված գործընթաց, որը կազմված է վտանգի աղբյուրի նույնականացման, վտանգի աղբյուրի բնութագրման, վտանգին ենթակա լինելու կամ վտանգի հանդեպ անպաշտպանվածության աստիճանի գնահատման և ռիսկի բնութագրման փուլերից,

- **ռիսկի կառավարում**՝ ռիսկի գնահատումից տարբերվող գործընթաց, որով, շահագրգիռ կողմերի հետ խորհրդակցությունների անցկացման միջոցով, լիազոր մարմնի կողմից քննության են առնվում ռիսկի կառավարմանն ուղղված քաղաքականության հնարավոր միջոցները, դիտարկվում են ռիսկի գնահատման արդյունքները և այլ հիմնավոր գործոններ և, անհրաժեշտության դեպքում, ընտրվում և կիրառվում են ռիսկի կանխմանը, վերացմանը կամ նվազեցմանն ուղղված համապատասխան գործողություններ, այդ թվում՝ վերահսկողության միջոցառումներ,

- **ռիսկի հաղորդակցություն**՝ ռիսկի վերլուծության գործընթացում ռիսկը գնահատողների, ռիսկը կառավարողների, սպառողների, սննդամթերքի անվտանգության, անասնաբուժության և բուսասանիտարիայի ոլորտներում գործառնություններ իրականացնող ֆիզիկական և իրավաբանական անձանց, գիտական (ակադեմիական)

շրջանակների ներկայացուցիչների և շահագրգիռ այլ կողմերի միջև վտանգի, ռիսկի, ռիսկին առնչվող գործոնների և ռիսկի վերաբերյալ ընկալումների մասին տեղեկությունների և կարծիքների փոխանակում, ներառյալ՝ ռիսկի գնահատման արդյունքների և ռիսկի կառավարման առնչությամբ ընդունված որոշումների վերաբերյալ բացատրություններ,

անվտանգությունը հիմնավորող ուղեկցող փաստաթուղթ՝ անասնաբուժասանիտարական հաշվառված ձևաթղթեր (վկայական, տեղեկանք, սերտիֆիկատ), բուսասանիտարական սերտիֆիկատ, առողջության սերտիֆիկատ, որակի և անվտանգության կառավարման համակարգի սերտիֆիկատ, համապատասխանության հայտարարագիր, փորձարկման լաբորատորիայի արձանագրություն:

Մնացած բոլոր բուսասանիտարական տերմինները և հասկացությունները կարող եք գտնել sound.am էլեկտրոնային կայքում «Բուսասանիտարական բառարան» ք. Երևան, 2010 թվականի հրատարակությունում, (հայերեն-ռուսերեն-անգլերեն-ֆրանսերեն լեզուներով):

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ԲԿԲՊՄՅ (MK33P-IPPC)՝ Բույսերի կարանտինի բույսերի պաշտպանության միջազգային համաձայնագիր (կոնվենցիա)

ԲԿԲՊԵԿ (EOK3P-EPPO)՝ Բույսերի կարանտինի բույսերի պաշտպանության եվրոպական միջերկրածովյան կազմակերպություն

ԲԿԲՊԱԿ (HOK3P-NPPO)՝ Բույսերի կարանտինի բույսերի պաշտպանության ազգային կազմակերպություն

ԱՅԿ (BTO-WTO)՝ Առևտրի համաշխարհային կազմակերպություն

ԽՍՅՄ (CCCP-USSB)՝ Խորհրդային սոցիալիստական հանրապետությունների միություն

ԱՊՀ (CHG-CIS)՝ Անկախ պետությունների համագործակցություն

ՍԱԿ (OOH-UN)՝ Միավորված ազգերի կազմակերպություն

ԵԴ (ED- ED)՝ Եվրադիրեկտիվ

ԲՈՎ (AՓՔ)՝ Բուսասանիտարական ռիսկի վերլուծություն

ՊԳԿ (FAO- ՓԱՕ)՝ Պարենի գյուղատնտեսական կազմակերպու-

թյուն

ՍԲՄՅ (СФМ)՝ Սանիտարական և բուսասանիտարական միջազգային կիրառման համաձայնագիր

ԲՍՄՉ(MCՓՄ)՝ Բուսասանիտարական միջոցառումների միջազգային չափորոշիչ

ԿՎՕ՝ Կարանտին վնասակար օրգանիզմ

ԲՍՏՉ-ՏՉ(PM)՝ Բուսասանիտարական միջոցառումների տարածաշրջանային չափորոշիչ

ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՎԵԼՎԱԾ

ԲԿԲՊՄՅ – համաձայնագիր, ռուսերեն

ԱՅԿ – համաձայնագիր, ռուսերեն

ՍԱՊԾ – կանոնադրություն

ՀՀ օրենք «Բուսասանիտարիայի մասին»

ՀՀ օրենք «Սննդամթերքի անվտանգության պետական վերահսկողության մասին»

ՀՀ օրենք «Սննդամթերքի անվտանգության մասին»

ՍԱՊԾ պետի հրամաններ բուսասանիտարիայի վերաբերյալ

ԲԿԲՊՄՅ անդամ երկրների ցանկ

ԲԿԲՊԵԿ - ----- ցանկի համաձայնագիր

ԱՅԿ - ----- ցանկ

ՊԳԿ - ----- ցանկ

ԲՍՄՉ ընդհանուր ցանկ կարճ նկարագրություն և ռուսերեն համառոտ բովանդակությունը

ԲՍՄՉ թարգմանություն, հայերեն ցանկ և տեսակները ըստ համարակալման

ԿՎՕ – ՀՀ տարածքում սահմանափակ տարածված
ԵԴ – 2000/29 հավելվածներով
ՊԳԿ, ԲԿԲՊՄՅ, ԲԿԲՊԵԿ, ՍԱՊԾ (ԲԿԲՊՍԱԿ) լրգոներ
ԲԿԲՊԵԿ ցանկ ՏՉ և բովանդակություն, ռուսերեն

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Բույսերի կարանտինի - բուսասանիտարիայի կազմակերպման և զարգացման պատմությունը4

Բույսերի կարանտինի զարգացումը արտասահմանում5

Բույսերի կարանտինի և բույսերի պաշտպանության միջազգային կոնվենցիա (Համաձայնագիր ԲԿԲՊՍՀ) (ՀՀ 2006թ.)9

Առևտրի համաշխարհային կազմակերպություն (ԱՀԿ) (ՀՀ 2003թ.)13

Բույսերի կարանտինի բույսերի պաշտպանության եվրոպական և միջերկրածովյան կազմակերպություն (ԲԿԲՊԵԿ)18

ԱՊՀ անդամ պետությունների բույսերի կարանտինի համակարգման խորհուրդ22

Բուսասանիտարիան ՀՀ-ում23

ՀՀ ԳՆ ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

ՏԵՂԵԿԱԳԻՐ

ԲՈՒՍԱՍԱՆԻՏԱՐԻԱԿԱՆ ԱՇԽԱՐՀՈՒՄ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Государственная служба безопасности пищевых продуктов Республики Армения

ФИТОСАНИТАРИЯ В МИРЕ И В АРМЕНИИ

Составили

Главный специалист управления фитосанитарными рисками, кандидат экономических наук
Чиркинян Анаит Араратовна

Главный эксперт по фитосанитарии
Тарзян Меружан Мартынович

Редактор
Вардуи (Ануш) Арутюнян

Չափը 60x84 1/16
Տպագրված է «Տիգրան Մեծ» հրատարակչություն
ՓԲԸ տպարանում